

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

2016-2020 ԹԹ.

ԶԵԿՈՒՅՑ

2017/2018 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2018



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	5
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ	
ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	6
I. Որակյալ կրթություն.....	6
II. Արդիական հետազոտություն և նորարարություն .....	21
III. Հանրային ներգրավում և ծառայություններ .....	29
IV. Որակյալ մարդկային ռեսուրսներ .....	38
V. Որակյալ ենթակառուցվածքներ .....	43
VI. Որակյալ ծառայություններ.....	52
VII. Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն.....	63
VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում.....	73
IX. Միջազգայնացում և գործակցություն.....	85



## ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով (ՌԾ) նախատեսված է իրականացնել 9 ռազմավարական նպատակ՝ միտված համալսարանում որակյալ կրթության ապահովմանը, արդիական բարձրակարգ հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ մարդկային ռեսուրսների կատարելագործմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցման ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը: 2016-ին մեկնարկված ՌԾ-ով սահմանված խնդիրների ու նպատակների իրականացման ուղղությամբ աշխատանքները կատարվում են հաստատված ժամանակացույց-պլանին համապատասխան: Անցած ժամանակահատվածում մի շարք գործողություններ իրականացվել են սահմանված ժամկետում, որոշ գործողություններ շարունակական բնույթ ունեն և ընթացքի մեջ են, մի մասն էլ չի իրականացվել կամ թերի է իրականացվել օբյեկտիվ պատճառներով:

Ստորև ներկայացվում է 2017/2018 ուստարում նախատեսված խնդիրների իրականացման առաջընթացը՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարողականով:

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

## ԳՆԱՀԱՏՈՒՄ

### I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

*Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից:*

**«Որակյալ կրթություն»** ռազմավարական նպատակի *Խնդիր 1.1*-ով սահմանված է. **«Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ»:**

Խնդրի *1-3-րդ և 6-րդ գործողությունները* լիովին կատարվել են սահմանված ժամկետներում՝ ապահովելով ակնկալվող արդյունքներ:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. **«Վերամշակել բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան»:** Այս ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են համաձայն «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման վերաբերյալ» ԵՊՀ ռեկտորի 2017 թ. հոկտեմբերի 4-ի թիվ 172Ց13 հրամանի և սահմանված հստակ ժամանակացույցի: Նշված հրամանը, կից ժամա-

նակացույցը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի փաթեթը էլեկտրոնային փոստով տրամադրվել են բակալավրի կրթական ծրագիր իրականացնող ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներին: Փաստաթղթերի փաթեթը ներառել է «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը», «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը», «Կրթական ծրագրի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույցը», առկա և հեռակա ուսուցման (առանձին-առանձին) բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ուսումնական պլանի օրինակելի ձևաթերթերը, ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթը, ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը», ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի ցանկը և այլն:

Աշխատանքների առաջին փուլում յուրաքանչյուր ծրագրի համար ստեղծվել է ծրագրի լրամշակման աշխատանքային խումբ, որը լրացրել և ֆակուլտետի ԳԽ-ի հաստատմանն է ներկայացրել տվյալ կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթը: Վերջինս ներկայացվել է Որակի ապահովման կենտրոն՝ հայտի գնահատման և ծրագրի հետագա մշակումն արտոնելու համար:

Աշխատանքային խմբերը, ՈԱ կենտրոնի աշխատակիցների պարբերական խորհրդատվությամբ, սահմանված ժամկետներում իրականացրել են նախատեսված աշխատանքները, որոնց արդյունքում ստեղծվել են հստակ ձևաչափերով և գործող պահանջներին համապատասխան ծրագրերի ամբողջական փաստաթղթային փաթեթները: Դրանցում ընդգրկված ծրագրի ուսումնական պլանը, ծրագրի մասնագիրը՝ ներառյալ ուսումնական մոդուլների համառոտագրերը, լիո-

վին համապատասխանեցվել են «Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (հաստատված ԵՊՀ ԳԽ 2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում) փաստաթղթի պահանջներին: Հաշվի են առնվել նաև ՀՀ որակավորումների ազգային շրջանակի բակալավրի և մագիստրոսի կրթական մակարդակների համար սահմանված որակավորումների պահանջները:

Ծրագրերի փաստաթղթային փաթեթները ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կողմից ստուգվելուց հետո տրամադրվել են փորձաքննական հանձնաժողովներին, որոնք անցկացրել են փորձաքննություն և համապատասխան եզրակացությունը ներկայացրել ՈԱ կենտրոն: Գործընթացի հաջորդ փուլում փորձաքննության և ՈԱԿ-ի եզրակացությունները ներկայացվել են ԵՊՀ ԳԽ որակի ապահովման մշտական հանձնաժողով՝ վերջնական եզրակացության համար: Լրամշակված կրթական ծրագրերի վերաբերյալ վերջնական եզրակացությունների հիման վրա ԵՊՀ գիտական խորհուրդը 2018 թ. մայիսի 3-ի նիստի թիվ 6/3 որոշմամբ հաստատել է առկա ուսուցման 53 բակալավրի կրթական ծրագիր: Եվս 17 կրթական ծրագիր հաստատվել է հեռակա ուսուցման համար:

*Խնդիր 1.1-ի 5-րդ գործողությամբ* նախատեսված է. «Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր»: Այս ուղղությամբ հաշվետու ժամանակաշրջանում որոշակի աշխատանք կատարվել է, մասնավորապես՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի կողմից մշակվել է «Տվյալների գիտությունը բիզնեսում» միջմաս-



նագիտական մագիստրոսական կրթական նոր ծրագիրը, որը մեկնարկել է 2017/2018 ուստարում: Եվս մեկ ծրագիր՝ «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն», մշակվել է Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի և Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի կողմից: Այն մեկնարկել է 2018/2019 ուստարվանից:

*Խնդիր 1.1-ի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ»:* Այս նպատակով մշակվել է «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը», որը հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2018 թ. մայիսի 3-ի նիստում: Կարգում հստակ սահմանված են պրակտիկայի տեսակները, կազմակերպման ձևը, պրակտիկայի ղեկավարումը և արդյունքների գնահատումը:

Հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, ինչպես նաև ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները՝ կնքվել են նոր պայմանագրեր, ինչի արդյունքում ընդլայնվել է մասնագիտական պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը:

Հաշվետու ուստարում մանկավարժական պրակտիկան անցկացվել է Երևանի դպրոցներում, կնքվել են նոր պայմանագրեր:

Ուսումնական պրակտիկաների մի մասն իրականացվել է երթուղիների ձևով: Վերանայվել են ֆակուլտետների կողմից ներկայացված երթուղիները՝ համապատասխան մասնագիտությունների գծով: Որոշ ֆակուլտետների ուսումնական պրակտիկայի շրջանակներում

եղել են այցելություններ տարբեր թանգարաններ, պատմամշակութային հուշարձաններ, առևտրի կենտրոններ, ծառայություններ մատուցող և սպասարկման օբյեկտներ:

***Խնդիր 1.2-ով սահմանված է. «Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ստեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոն՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները արդիականացնելու ու զարգացնելու նպատակով»: Այս գործողության իրականացման նպատակով ERASMUS+ PRINTeL նախագծի շրջանակներում նախատեսված է վերակառուցել Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության համապատասխան բաժնի գործունեությունը՝ ուղղորդելով այն ԵՊՀ դասախոսական կազմի՝ նորարական և տեխնոլոգիապես հագեցած դասավանդման և ուսումնառության մեթոդների ուսուցմանը: Գործընկեր եվրոպական բուհերում այդ նպատակով վերապատրաստվել է նշված վարչության պետը, իսկ 2018 թ. աշնանը նախատեսված է նոր ստեղծվող կենտրոնի համար վերապատրաստել 16 վերապատրաստող դասախոսների՝ հինգ տարբեր նորարական մեթոդներով ուսուցում իրականացնելու համար: Միաժամանակ մշակվելու և ընդունվելու է նաև վարչության գործունեության նորացված ծրագիրը: Նախատեսված է, որ վարչությունը ԵՊՀ դասախոսական կազմին կտրամադրի ոչ միայն վերապատրաստման դասընթացներ, այլև անհատական և խմբային խորհրդակցություններ, ինչպես նաև կկազմակերպի վիրտուալ և իրական ֆորումներ, սեմինարներ, աշխատաժողովներ՝ դասավանդման և ուսումնառության նորարարական

մեթոդների տարածման, ինչպես նաև առկա լավագույն փորձի խրախուսման նպատակով:

Այս խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ձարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը»*: Սույն գործողությունը ժամանակային առումով վերաբերում է ՌԾ իրականացման ողջ ընթացքին: Տվյալ ուղղությամբ շարունակվել է գործընթացների իրականացումը: Կիրառության մեջ դրված «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» համաձայն՝ լրավճար է հատկացվել այն դասախոսներին (բացառությամբ ժամավճարային հիմունքներով աշխատողների), ովքեր ընդգրկվել են ուսանողների հարցման արդյունքներով անցկացվող մրցութային ցուցակներում: Համաձայն վերոնշյալ կարգի՝ ԵՊՀ-ում ուսանողների հարցման արդյունքներով կազմակերպվող մրցույթի մասնակից դասախոսները, ըստ նրանց գնահատած ուսանողների թվի, բաժանվել են երեք ենթախմբի: Առաջին ենթախմբում ընդգրկված դասախոսներին յուրաքանչյուր կիսամյակում գնահատել է 25-30 ուսանող, երկրորդ ենթախմբում ընդգրկվածներին՝ 51-100 ուսանող, իսկ երրորդ ենթախմբում ընդգրկվածներին՝ 101 և ավելի ուսանող:

Հարցումների արդյունքներով կազմակերպված մրցույթին մասնակցած և առավելագույն միավոր ստացած առաջին ենթախմբի 68 դասախոսի վճարվել է լրավճար՝ նրանց մեկ ամսվա դասախոսական

աշխատավարձի 50 տոկոսի չափով, երկրորդ ենթախմբի 57 դասախոսի՝ 60 տոկոսի չափով, իսկ երրորդ ենթախմբի 32 դասախոսի՝ 70 տոկոսի չափով:

Ընդհանուր առմամբ՝ 2017/2018 ուստարում 157 դասախոսի հատկացվել է լրավճար, որի գումարը կազմել է ավելի քան 17 մլն դրամ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով»*: Այս գործողության իրականացման նպատակով ուսումնասիրվել են մի շարք առաջատար միջազգային բուհերի փորձը կրթության և հետազոտության փոխկապակցման ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքում մշակվել են մի շարք միջոցառումներ ԵՊՀ կրթական ծրագրերում դրանք կիրառելու նպատակով: Մասնավորապես՝ բակալավրի կրթական ծրագրերում ավարտական աշխատանքի կատարումը, որը պարունակում է հետազոտական մի շարք բաղադրիչներ, դարձել է պարտադիր բոլոր ուսանողների համար, բոլոր մագիստրոսական կրթական ծրագրերում հաշվետու ուստարվանից ներդրվել է «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» պարտադիր դասընթացը, իսկ հիմնական մասնագիտական դասընթացներում խրախուսվում է հետազոտական բաղադրիչների առկայությունը:

Խնդիր 1.2-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի*

*(ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով»:*

Այս ուղղությամբ, ըստ ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանի սկսված գործընթացները շարունակվել են նաև հաշվետու ժամանակաշրջանում՝ ապահովելով ակնկալվող որոշակի արդյունքներ: Մասնավորապես՝ մշակվել և ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հաստատվել են մագիստրոսական թեզի և բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգերը, որոնցով հստակեցվել են թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման գործընթացները, ներմուծվել են դրանց կատարման ընթացքի մոնիթորինգի մեխանիզմներ, գնահատման չափանիշներ և չափորոշիչներ: Միաժամանակ, նշված փաստաթղթերում սահմանված են հստակ դրույթներ՝ գրագողությունը կանխելու և ակադեմիական ազնվությունն ապահովելու վերաբերյալ: Այսպես, «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի» 4-րդ կետի 4.5 և 4.6 ենթակետերով սահմանված է, որ թեզի նախապաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության, իսկ թեզի հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»: Նույն պահանջներով դրույթներ ներառված են նաև «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում»: Երկու կարգում էլ հղմամբ տրված է, թե որ դեպքում է արձանագրվում գրագողություն:

**«Որակյալ կրթություն»** ռազմավարական նպատակի *Խնդիր 1.3*-ով սահմանված է. **«Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը»:**

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Փորձնական սկզբունքով ստեղծել մի շարք կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում»:* Ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու ուստարում այս ուղղությամբ աշխատանք չի իրականացվել:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում»:* Այս գործողության կատարման ուղղությամբ սկսված աշխատանքները շարունակվել են, և գործընթացների արդյունքում որոշ նոր մեթոդներ են կիրառվում: Մասնավորապես՝ ներդրված ԵՊՀ աշխատողների համացանցային ներքին տիրույթի՝ համալսարանի «Ինտրանետ» համակարգի միջոցով գործարկվում է դասախոսական կազմի հաշվետվողականության մեթոդը:

Սույն գործողության հետագա իրականացման նպատակով ձեռնարկվում են նաև այլ քայլեր:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը»:* Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանք-

ները որակի ապահովման և հավատարմագրման վեր-հենքով վիրտու-  
ալ շտեմարանի ստեղծման ուղղությամբ: Վերջինիս նպատակն է ա-  
պահովել ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդ-  
յունավետության գնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմ-  
ները, ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված մի-  
ջոցառումների ու դրանց արդյունքների վերաբերյալ իրազեկել ԵՊՀ և  
լայն հանրությանը:

Վերոնշյալ խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Նախա-  
պատրաստել և առցանց եղանակով իրականացնել ԵՊՀ-ում դասա-  
վանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական  
հարցումները, ինչպես նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավա-  
րարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները»*: Այս  
գործողությանը նպատակաուղղված աշխատանքները լիովին իրակա-  
նացվել են դեռևս նախորդ ուստարում և տվել ակնկալվող արդյունք-  
ներ. և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգում դասավանդման  
որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում-  
ներն իրականացվել են առցանց եղանակով: Առցանց եղանակով են  
իրականացվել նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտե-  
րի բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումները:

*Խնդիր 1.4*-ով սահմանված է. *«Ապահովել տեղեկատվական տեխ-  
նոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական  
գործընթացում»*:

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Ներդնել և շահա-  
գործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ու-*

*սումնառության էլեկտրոնային ռեսուրսների առցանց մատուցման համար»:* Այս առնչությամբ 2017/2018 ուստարում մշակվել է ԵՊՀ ներհամալսարանական տեղեկատվական և հաղորդակցական համակարգերի փոխկապակցող հանգույց: Այն ընդգրկում է ուսուցման կառավարման, դասախոսների հետազոտական գործունեության միասնական հաշվետվողականության, ուսումնական պլանների և պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածությունների տեղեկատվական համակարգերը: Փոխկապակցման հանգույցը ապահովում է համակարգերում գրանցված ուսանողների և դասախոսների միասնական նույնականացում, ինչպես նաև դասընթացների սինխրոնիզացում ուսուցման կառավարման համակարգի (ՈւԿՀ) հետ:

Ուստարվա սկզբին հանգույցը, ուսումնական պլանների և ծանրաբեռնվածության տեղեկատվության համաձայն, յուրաքանչյուր դասընթացի համար ԵՊՀ ուսուցման կառավարման համակարգում կառուցում է վիրտուալ դասարան, որին կցվում է դասավանդող դասախոսը, և ընդգրկվում են նախատեսված բոլոր ուսանողները: Բացի այդ, ինչպես նշվեց վերևում, Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունում նախատեսված է տեխնոլոգիապես հագեցած դասավանդման և ուսումնառության վերապատրաստման նոր դասընթացների ներմուծում և իրականացում ԵՊՀ դասախոսների համար:

*Խնդիր 1.4-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար»:* Այս գործողության իրականացման նպատակով աշխատանքներ են տարվել



ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ղեկավար ձեռնարկ-ուղեցույցի լրամշակման ուղղությամբ՝ հաշվի առնելով համապատասխան դիտողությունները և Խնդիր 1.4.1-ի ուղղությամբ կատարված աշխատանքը: ERASMUS+ PRINTeL նախագծի շրջանակներում նախատեսված է մինչև 2020 թ. ստեղծել դասավանդման և ուսումնառության վիրտուալ ակադեմիա, որը հնարավորություն կտա ԵՊՀ դասախոսական կազմին հեշտությամբ ստեղծելու էլեկտրոնային ուսուցման ռեսուրսներ:

Վերոնշյալ խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար», որի շրջանակներում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրով իրականացվել է երկու դասընթաց: Առաջինը «Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» 32-ժամյա դասընթացն է, որը նախատեսված է ինչպես սկսնակ, այնպես էլ որոշակի փորձառություն ունեցող դասախոսների համար: Որպես բազային միջավայր դիտարկվում է Moodle հարթակը: Դասընթացն ավարտվել է դասախոսների կողմից ավարտական նախագծի մշակմամբ, դրանց գնահատմամբ և թեստավորմամբ: Վերապատրաստվել է 26 դասախոս (1 խումբ):

Երկրորդ դասընթացը Google Classroom-ը հեռավար կրթության համատեքստում է և ունի 20-ժամյա ծավալ: Դասընթացի նպատակն է «Google Classroom»-ի օրինակով դիտարկել ու վերլուծել ժամանակակից կրթական համակարգի՝ հեռավար ուսուցման մեթոդաբանական խնդիրները, հստակեցնել հեռավար կրթական աշխատանքի համար

անհրաժեշտ գործիքակազմը: Դասախոսները տիրապետել են «Google Classroom»-ում դասընթաց ստեղծելու, վարելու և գնահատելու հմտություններին: Այս դասընթացը ևս ավարտվել է թեստավորմամբ: Վերապատրաստվել է 13 դասախոս (1 խումբ): Նախատեսվում է դասընթացների շարունակական իրականացում:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար»*: Նախատեսված գործողության իրականացումը հիմնված է ԵՊՀ գիտխորհրդի 2017 թ. դեկտեմբերի 21-ի նիստով հաստատված «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի (նոր խմբագրությամբ)» վրա: Համաձայն այդ կարգի՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար խրախուսման միջոց են «Ինտրանետ» հաշվետվողականության համակարգում ներբեռնված՝ ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ հաստատված էլեկտրոնային նյութերի (դասախոսություններ կամ ուսումնական ձեռնարկներ), ինչպես նաև ՀՀ ԿԳՆ-ի կողմից երաշխավորված բուհական դասագրքերի ներդրման համար հատկացվող լրավճարները: Ավելի քան 50 դասախոսի տրամադրվել է լրավճար, որի գումարը կազմել է շուրջ 4 մլն դրամ: Արդյունքում, «Ինտրանետ» համակարգում որպես էլեկտրոնային նյութեր և բուհական դասագրքեր ներբեռնվել է ավելի քան 30 աշխատություն:

*Խնդիր 1.4-ի 6-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով*»: Այս գործողության կատարման նպատակով հաշվետու ժամանակահատվածում բակալավրիատի առկա ուսուցման քսան, իսկ հեռակա ուսուցման բոլոր հոսքերում հեռահար ուսուցման եղանակով դասավանդվել են «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ», և վեց հոսքերում՝ «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» դասընթացները, իսկ քառասուներկու հոսքերում խառը (հիբրիդ) ուսուցման եղանակով դասավանդվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ» դասընթացը:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «*Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները*»: Սահմանված ժամանակահատվածում իրականացվել են ուսուցանվող ռեսուրսների և ծրագրային գործիքների թարմացում. մասնավորապես՝ վերամշակվել է «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի 400 և «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» դասընթացի 350 հարց:

Մշակվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ» համահամալսարանական առցանց դասընթացը: Ստեղծվել են դասընթացի բոլոր թեմաների տեսանյութերը և դրանք ներառող մոտ 800 հարցից բաղկացած շտեմարան: Մշակվել է դասընթացում կիրառվող տերմինների մուլտիմեդիա բացատրական բառարան:

Ներդրվել է ՈւԿՀ-ի հարթակի նորացված տարբերակը:

*Խնդիր 1.5-ով սահմանված է. «Մտեղծել լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն»:* Խնդրի իրագործման համար նախատեսված է չորս գործողություն, որոնք, սակայն, չեն իրականացվել ֆինանսական հնարավորությունների բացակայության պատճառով:

## II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, համապատասխանեցնել ասպիրանտական կրթության չափանիշները համաեվրոպական պահանջներին:*

**«Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի Խնդիր 2.1-ով սահմանված է. «Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը»:**

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով»: Հետազոտական գործունեության գնահատում իրականացնելու համար ԵՊՀ-ում ներդրվել են գիտահետազոտական գործունեության գնահատման չափանիշներ, որոնք ամփոփված են «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 1.1 կետում (վերանայվել և նոր խմբագրությամբ հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի 28.06.2018 թ. թիվ 7/5 որոշմամբ): Նշված կարգում սահմանված են պարբերականների դասակարգմամբ պայմանավորված չափանիշները: Կարգի համաձայն՝ ԵՊՀ բոլոր աշխատողները, ում հրապարակումները բավարարել են կարգում նշված չափանիշները, 2017 թ. դեկտեմբերին ստացել են լրավճար:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար»։ Այս գործողության կատարմանն ուղղված՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար մշակվել և ներդրվել են մեխանիզմներ, որոնք պարբերաբար վերանայվում են և բարելավվում։ Մասնավորապես՝ ԵՊՀ գիտական խորհրդի 28.06.2018 թ. թիվ 7/5 որոշմամբ, համաձայն վերոնշյալ կարգի (նոր խմբագրությամբ) 2.1 կետի աղյուսակ 1-ի 1-ին կետի, 50 %-ով ավելացվել է ազդեցության գործակցով ամսագրերում տպագրված հոդվածի համար հատկացվող լրավճարի չափը։ Պարբերաբար հստակեցվում է նաև ազդեցության գործակցով ամսագրերի ցանկը՝ ըստ Clarivate Analytics գործակալության ամենամյա *Journal Citation Reports (JCR)* զեկուցման։

Խնդիր 2.1-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը»։ Գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների մասնակցությունը մեծացնելու համար լրավճարների մասին կարգի 2.1 կետի աղյուսակ 1-ի 10-րդ կետի համաձայն նախատեսված է լրավճար բոլոր այն դեկավարների համար, ովքեր իրենց ասպիրանտներին կընդգրկեն նշված ծրագրերում, ընդ որում՝ նշված լրավճարի չափը ավելացված է 50 %-ով։ Մագիստրանտներին գիտահետազոտական գործունեության մեջ ընդգրկելու համար նախատեսված է

խրախուսում՝ համաձայն վերոնշյալ կարգի 3.1 կետի աղյուսակ 2-ի 9-րդ կետի:

*4-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը*»: ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածուում տպագրված աշխատանքների ղեկավարումը և ֆակուլտետային ՈւԳԸ-ի գիտական ղեկավարումը խրախուսվում են համաձայն վերոնշյալ կարգի 3.1 կետի աղյուսակ 2-ի 8-րդ և 9-րդ կետերի:

Խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում*»: Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի իրականացման բարելավմանն ուղղված գործընթացները շարունակական բնույթ ունեն: Այս առնչությամբ, հաշվետու ժամանակահատվածում վերամշակվել են բակալավրի կրթական ծրագրերը, որտեղ ավարտական աշխատանքի կատարումը դարձել է պարտադիր բոլոր ուսանողների համար: Մշակվել և կիրառության մեջ է դրվել նաև «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը»: Միաժամանակ, 2017/2018 ուստարվանից սկսած՝ բոլոր մագիստրոսական կրթական ծրագրերում ներդրվել է «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» պարտադիր դասընթացը:

Խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ստեղծել Start-Up լաբորատորիաներ՝ բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում նորարարական հետազոտություններ*»:

*րը խթանելու նպատակով*»: ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում նորարարական հետազոտությունները խթանելու նպատակով Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ ստեղծվել է Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոն, որն արդեն իսկ գործում է:

***Խնդիր 2.2-ով սահմանված է. «Չարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում»: Մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում շարունակաբար ներգրավվում են հանրապետության առաջատար գիտաշխատողներ տարբեր գիտական կազմակերպություններից:

2-րդ գործողությամբ նախատեսված է. «Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը»: Գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացումը տարբեր ոլորտներում ունի շարունակական բնույթ, մասնավորապես՝ համատեղ ծրագրեր են իրականացվում ԵՊՀ ստորաբաժանումների և ՀՀ ԳԱԱ համապատասխան ինստիտուտների կողմից, որի արդյունքում մեծ թվով մասնագետներ համագործակցում են: Այդ մասին է վկայում ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կողմից հայտարարված թեմատիկ ֆինանսավորման մրցույթներում հաղթած ԵՊՀ թեմա-



ներում այլ գիտահետազոտական կենտրոնների աշխատողների ընդգրկվածության աճը:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը»: Շարունակական բնույթ է կրում ձեռնարկությունների հետ կրթական և հետազոտական ծրագրերի իրականացումը: Արդեն իսկ գործող ծրագրերին (մասնավորապես՝ «Սինոփսիս» ընկերության և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի համատեղ կրթական ծրագիրը, Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի, Էկոլոգիայի ու բնության պահպանության ամբիոնի համագործակցությունը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, «Արենի-1 քարայր» կոնսորցիումի, «Զորահ Վայնս», «Արենի», «Արմենիա Վայնս» գինեգործարանների հետ) այս տարի ավելացել է նաև Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում ISTC կենտրոնի հետ համատեղ իրականացվող «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մագիստրոսական ծրագիրը:

Արդյունավետ համագործակցություն է ծավալվում նաև ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի և ՀՀ դեղագործական մի շարք ընկերությունների միջև: Դրանցից են «Լիքվոր», «Արփիմեդ» և «Ֆարմատեկ» դեղագործական ընկերությունները, «Ալֆա-Ֆարմ» և «Նատալի-Ֆարմ» դեղատների ցանցը, «Աստղիկ» բժշկական կենտրոնը, «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը», ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը և այլն:

*Խնդիր 2.3-ով սահմանված է. «Խթանել Համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացումը»:*

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ամրագրել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղադրիչ»:  
ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվության մեջ պարտադիր կետ է դարձել հետազոտական գործունեության միջազգայնացման մասին զեկուցելը:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում Համալսարանի աշխատողների հրապարակումները»: Նշված պարբերականներում հրապարակումները խրախուսվում են լրավճարների մասին վերը հիշատակված կարգի համաձայն: ԵՊՀ գիտխորհրդի 28.06.2018 թ. թիվ 7/5 որոշմամբ, համաձայն այդ կարգի 2.1 կետի աղյուսակ 1-ի 2-րդ և 3-րդ կետերի, 50 %-ով ավելացվել է միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հրապարակումների համար հատկացվող լրավճարի չափը: Շարունակաբար հստակեցվում է միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականների ցանկը՝ ըստ «Web of Science» և «Scopus» շտեմարանների:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը»: Հաշվետու ժամանակահատվածում օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը չի ավելացել. միայն անզլերենով հրատարակվում է երկու սերիա, մյուսները եռալեզու են:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Շարունակել կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցությանը»: ԵՊՀ-ի կողմից միջազգային գիտաժողովների կազմակերպումը շարունակական գործընթաց է, որը ավելի արդյունավետ է դարձել շնորհիվ հաշվետու շրջանում ուժի մեջ մտած «Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգի»:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը»: Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության շարունակականության և խորացման մասին է վկայում համատեղ հետազոտական ծրագրերի թվի աճը, որը նախորդ ուստարվա համեմատ կազմում է մոտ 24 %:

**Խնդիր 2.4-ով սահմանված է. «Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Զալցբուրգյան սկզբունքներին»:**

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Կատարելագործել ասպիրանտական կրթությունը՝ որպես բաղադրիչ ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքի ստեղծումը»: Հաշվետու շրջանում կատարելագործվել, լրամշակվել և արդեն ներդրվել են ասպիրանտական կրթությանն առնչվող համապատասխան կարգերը, որոնք համահունչ են Զալցբուրգյան սկզբունքներին՝ կարևորելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքի ստեղծումը:

*3-րդ գործողությանը* նախատեսված է. «Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը»: ԵՊՀ-ն շարունակաբար նպաստում է ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցության իրականացմանը՝ մասնավորապես գործուղելով ասպիրանտներին գործընկեր կազմակերպություններ:

*4-րդ գործողությանը* նախատեսված է. «Ապահովել ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր»: ԵՊՀ-ն եղած ռեսուրսների պայմաններում ապահովում է ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր՝ պարբերաբար թարմացնելով լաբորատոր բազան նոր սարքավորումներով, գրադարանային ռեսուրսները՝ նոր գրականությամբ, օժանդակելով դրամաշնորհային ծրագրերի իրականացմանը և այլն:

### III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ջարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, խթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:*

**Հանրային ներգրավում և ծառայություններ»** ռազմավարական նպատակի *Խնդիր 3.1*-ով սահմանված է. **«Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը»:**

*Խնդիր 3.1-ի 2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ջարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը»:* 2018 թ. շարունակվել է ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների հետ արդյունավետ համագործակցությունը, պարբերաբար կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ նրանց հետ:

ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների հետ պարբերական աշխատանքը նպաստել է հանրային կապերի ոլորտում ներբուհական ցանցի արդյունավետության բարձրացմանը:

*Խնդրի 3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները»:* Շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման ուղղու-

թյամբ տարվող աշխատանքները՝ համալսարանի ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն:

Հաշվետու ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալի հետևյալ կայքերը և բաժինները՝ Ֆարմացիայի ինստիտուտ (<http://www.yasu.am/pharmacy>), Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն (<http://www.yasu.am/pedagogy>), Իջևանի մասնաճյուղի էլեկտրոնային գրադարան (<http://ijevanlib.yasu.am/>), «Իրանական լեզվաբանության 8-րդ միջազգային գիտաժողով» (ICIL 8) (<http://icil8.yasu.am/>): Թվայնացվել են ԵՊՀ-ում պահվող բոլոր կինոժպավենները, որոնց ընդհանուր տևողությունն ավելի քան 1000 ռոպե է, ինչպես նաև 83 աուդիո ժապավեն: Խմբագրվել է «Առաջին կուրսեցու ուղեցույց» կայքի բովանդակությունը:

Պարբերաբար թարմացվում են «ԵՊՀ փաստաթղթեր» (<http://doc.yasu.am>), «Դիմորդ» (<http://www.yasu.am/entrant>), «ԵՊՀ կառուցվածք» (<http://www.yasu.am/ysu>) և այլ կայքեր: Թարմացվել է ԵՊՀ էլեկտրոնային հեռախոսագիրքը (<http://www.phone.yasu.am>):

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքի «Դիմորդ» բաժնում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 24 ձևաթուղթ տեղադրվել է օրական երկու անգամ:

Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 1680 նյութ, իսկ «Հայտարարություն» բաժնում՝ 135 հայտարարություն:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացվել են 2112 գիտական հրապարակումների մասին տվյալներ: Կայքում առկա է շուրջ 26770 հրապարակում:

«Googleanalytics»-ի տվյալների համաձայն՝ շաբաթական այցելուների թիվն անցնում է 16.000-ը: Ամենաշատ այցելուները Հայաստանից են (87 %), այնուհետև՝ Ռուսաստանից (2,8 %), ԱՄՆ-ից (1,7 %), Գերմանիայից (0,6 %), Վրաստանից (0,5 %) և այլն:

Խնդիր 3.1-ի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը»*: Գործունեության նպատակահարմարությունից ելնելով՝ մշակվել և ընդունվել է միասնական՝ «ԵՊՀ հանրային կապերի, մարքեթինգային գործունեության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության» հայեցակարգը, որի կարևոր բաղադրիչներից է մարքեթինգային գործունեությունը: Սահմանված ժամանակահատվածում հրատարակվել են ԵՊՀ-ին վերաբերող անգլալեզու բուկլետներ, տեղեկատվական ֆլայերներ, օրացույցներ, թարմացվել և վերահրատարակվել է ԵՊՀ տեղեկատուն:

Մշակվել և պատրաստ են արտադրության ԵՊՀ տարբերանշանով զանազան իրեր: Ավարտվել է ԵՊՀ 100-ամյակին ընդառաջ հատարարված ԵՊՀ դրոշմանիշի էսքիզի մրցույթը, ընտրվել է մրցույթի հաղթողը:

«ԵՊՀ ուսանողական ծառայություններ» ՄՊԸ-ն մեկնարկել է աշխատանքները, պատվիրվել են ինքնատիպ հուշանվերներ ԵՊՀ խորհրդանիշներով:

*Խնդիր 3.1-ի 5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը»*: Շարունակվել է ԵՊՀ-ին հասցեագրված թղթային և էլեկտրոնային նամակներին օպերատիվ արձագանքելու գործընթացը: ԵՊՀ-ին ուղղված բոլոր հարցումներն ստացել են սպառիչ պատասխաններ:

«Միջազգային» կայքի «Հայտարարություններ» բաժնում տեղադրվել են ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերին վերաբերող հայտարարություններ:

«issuu.com/ysu.am» կայքում 2018 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ 121 էլեկտրոնային հրապարակում է մուտքագրված (ԵՊՀ պաշտոնաթերթը, Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հրապարակումները, տարբեր տարեթվերի ԵՊՀ բուկլետները, ԵՊՀ 90-ամյակի ֆոտոալբոմը, 1925 թվականի ԵՊՀ կանոնադրությունը և այլն):

2017 թ. մայիսից գործարկվել է ԵՊՀ «Ինստագրամի»՝ [https://www.instagram.com/ysu\\_yerevan\\_state\\_university/](https://www.instagram.com/ysu_yerevan_state_university/) պաշտոնական էջը:

ԵՊՀ-ի «Youtube» տիրույթում հաշվետու ուստարում մուտքագրվել է 15 տեսանյութ:

Նկարահանվել է համալսարանի մասին պատմող 5 տեսանյութ («ԵՊՀ-ն՝ վերջին 10 տարում», «Արի Ռադիոֆիզիկա», «Արի Բանասի-



րական», «Արտասահմանյան գրականության ամբիոնի մասին», «ԵՊՀ ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոնի մասին»), ապահովվել է դրանց տարածումը:

2017/2018 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 8 համար՝ միջինը 32 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 47-52 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 304 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանում և այլն): Օպերատիվ թարմացվել է նաև «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի կայքը:

Հանրային հետաքրքրության միջոցառումները պատրաստի նյութի և լուսանկարների տեսքով (85 մամուլի հաղորդագրություն) ուղարկվել են հայաստանյան ՁԼՄ-ներին, ինչի արդյունքում աճել է ԵՊՀ-ի մասին հոդվածների քանակը:

Իրականացվել է տպագիր ՁԼՄ-ներում, ինտերնետային կայքերում և հեռուստաընկերություններում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Հաշվետու ժամանակահատվածում տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 620 նյութ, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը նախորդ տարվա համեմատ կրկնակի աճել է՝ հասնելով 4735-ի: Հայաստանյան հեռուստաընկերություններով հեռարձակվել է ԵՊՀ-ի վերաբերյալ 230 տեսանյութ: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատին:

ԵՊՀ կենտրոնական և մյուս մասնաշենքերի նախասրահներում տեղադրված հեռուստացույցներով ներկայացվել են համալսարանի մասին պատմող ֆիլմեր, ինչպես նաև տեղեկատվություն և հայտարար-

րություններ կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը 75 է:

ԵՊՀ-ում ստեղծվել է Մամուլի ակումբ:

Նույն խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել Համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները»*: Շարունակվել է ֆինանսական աջակցություն ցուցաբերվել ապրիլյան պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքներին, մասնավորապես՝ ԵՊՀ-ն 2018 թվականին շարունակել է զոհված 23 զինծառայողների 55 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ամենամսյա դրամական օգնություն տրամադրելու ծրագիրը: Յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվող օգնության չափը 40.000 ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխային՝ 20.000 ՀՀ դրամ: Այս ֆինանսական օգնությունը տարեկան կազմում է մոտ 19 մլն դրամ:

Շարունակվել են նաև սոցիալական ծրագրերը ուսանողների շրջանում, կատարվել է շուրջ 3200 ուսանողի ավելի քան 430 մլն դրամի ուսման վարձի զեղչ:

Շարունակվել են արդեն ավանդույթ դարձած ծառատունկը Արցախում, նվիրատվությունները դպրոցներին և գյուղական համայնքներին, պարբերաբար ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել «Հա-

յաստան» համահայկական հիմնադրամին (3 մլն դրամ) և Հայաստանի երիտասարդական հիմնադրամին (75 մլն դրամ):

*Խնդիր 3.1-ի 7-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը*»: Այս նպատակով 2018 թվականին ընդլայնվել, փոփոխվել և կատարելագործվել է ԵՊՀ աշխատողների էլեկտրոնային փոստի համակարգը, որին մեծապես նպաստել է ԵՊՀ աշխատողների համացանցային ներքին տիրույթի (intranet.yasu.am) շահագործումը:

Խնդրի 8-րդ գործողությամբ նախատեսված է. «*Գրահրատարակչական գործունեության արդյունքները առավելագույնս նպատակաուղղել հանրային ծառայությունների մատուցմանը*»: 2018 թվականին ԵՊՀ հրատարակչության հրատարակած գրքերից նվիրատվության կարգով պարբերաբար տրամադրվել են մայրաքաղաքի և մարզերի քաղաքային ու բուհական գրադարաններին: Հանրապետական և միջազգային ցուցադրությունների և տոնավաճառների ընթացքում նույնպես ԵՊՀ հրատարակչության հրատարակած գրականությունից որոշակի քանակություն տրամադրվել է համապատասխան ոլորտով հետաքրքրված անձանց:

*Խնդիր 3.2-ով* սահմանված է. «*Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը*»:

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «*Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը և պարբերաբար իրականացնել շուկայում առկա լրացուցիչ կրթական ծրագրերի մշտա-*

*ղիտարկում»,* որի շրջանակներում 2017/2018 ուստարում կատարվել է ուսումնասիրություն՝ արդյունքում ներկայացնելով երկու հաշվետվություն.

1. «Լրացուցիչ կրթության հանրային պահանջարկի ուսումնասիրում».
2. «Հաշվետվություն Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կրթական ծրագրերի մշտադիտարկման վերաբերյալ»:

Աշխատաշուկայում և կրթաշուկայում լրացուցիչ կրթության հանրային պահանջարկն ուսումնասիրելու նպատակով կատարվել է հիմնականում փաստաթղթային վերլուծություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բազմաթիվ հետազոտությունների հիման վրա: Ուսումնասիրություն է իրականացվել նաև քանակական մեթոդով՝ ԵՊՀ-ում վերապատրաստվող հանրային ծառայողների հարցումներով: Նշված հետազոտությունները բացահայտում են լրացուցիչ կրթության առանձնահատուկ դերակատարումը աշխատաշուկա-բուհ հարաբերություններում:

Աշխատաշուկայում մասնագետներին ներկայացվող պահանջների փոփոխությունները, լրացուցիչ կրթական ծրագրերի որակի ապահովումը և վերապատրաստող հաստատությունների մրցակցությունը անհրաժեշտ են դարձնում ԵՊՀ-ում գործող լրացուցիչ կրթական ծրագրերի պարբերական նորացումը: Նախորդ ուսումնական տարում իրականացված մշտադիտարկման արդյունքում 2017/2018 ուստարում ամբողջությամբ կամ մասնակիորեն լրամշակվել են վարչության լրացուցիչ կրթական ծրագրերը՝ և՛ բովանդակային, և՛ կադրային ապահովման առումով:

Հաշվետվությունները տեղադրված են «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» կայքէջում ([extension.y-su.am](http://extension.y-su.am)):

Նույն խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ապահովելու Համալսարանի ծրագրերի մրցակցությունը»*: «Լրացուցիչ մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգի» նախագիծը մշակվել և ներկայացվել է քննարկման: Սակայն, կապված այն իրողության հետ, որ ԵՊՀ-ում դասախոսների որակավորման բարձրացման կառույցի բարեփոխման գործընթաց է սկսվել, նախագծի քննարկումը կասեցվել է: ERASMUS+ ծրագրի շրջանակներում իրականացվում է «Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» նախագիծը: Մշակվում է ԵՊՀ դասախոսական կազմի կատարելագործման կառույցի 2019-2021 թթ. գործառության ծրագիր, որը կներկայացվի նախատեսված հայեցակարգի փոխարեն:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը»*, որի շրջանակներում 2017 թ. մշակվել է շուրջ 10 ծրագիր՝ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի, ՀՀ պաշտպանության նախարարության համար և այլն:

#### IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

*Ձարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:*

«Որակյալ մարդկային ռեսուրսներ» նպատակի *Խնդիր 4.2*-ով սահմանված է. *«Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ»:*

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր»:* Այս գործողության կատարման նպատակով հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ում իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ: Մասնավորապես՝ ստեղծվել և 2018 թ. ապրիլի 1-ից գործում է Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությունը: Վարչության կազմում ներառված են Անձնակազմի կառավարման և Իրավական ապահովման բաժինները: Վարչությունն իրականացնում է ԵՊՀ անձնակազմի կառավարմանն առնչվող բոլոր գործառնությունները՝ ներառյալ անձնակազմի հաշվառումը, աշխատողների վերապատրաստումն ու ատեստավորումը, աշխատանքային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, պաշտոնական առաջխաղացման ընթացակարգերի, պաշտոնի անձնագրերի (աշխատանքի նկարագրերի) մշակումը:

Հաշվետու ժամանակահատվածում հնգօրյա վերապատրաստման դասընթացներ են անցկացվել ԵՊՀ անձնակազմի կառավարման

վարչության և հաշվապահության աշխատողների հետ, որոնց ընթացքում քննարկվել են հարկային և աշխատանքային օրենսգրքերում կատարված փոփոխությունները և նորամուծությունները:

Նշված գործողությունը կրում է շարունակական բնույթ, և նախատեսվում է առաջիկայում ևս ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնի աշխատակազմի համար կազմակերպել եռօրյա մասնագիտական վերապատրաստման ծրագիր՝ իրավակիրառական պրակտիկայում աշխատանքային իրավահարաբերություններում ծագող հիմնախնդիրների քննարկման թեմայով:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար»:* Թեև ժամանակացույցի համաձայն նախատեսված էր այս գործողությունն ավարտել 2016 թ. դեկտեմբերին, սակայն միայն կառուցվածքային փոփոխություններից հետո՝ 2018 թ. գարնանն է ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման նորաստեղծ վարչությունը կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ մշակել և ԵՊՀ ռեկտորի հաստատմանը ներկայացրել ԵՊՀ վարչական ստորաբաժանումների աշխատողների պաշտոնի անձնագրերը: Վարչական ստորաբաժանումների ավելի քան 90 տոկոսն ունեն հաստատված պաշտոնի անձնագրեր:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար»:* Այս գործողությունը նույնպես նախատեսված էր ավարտել 2016 թվականի դեկտեմբերին,

սակայն այն իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում: Հաստատվել են ԵՊՀ ուսումնաօժանդակ համակազմի աշխատողների աշխատանքի նկարագրերը, որոնք 2018/2019 ուսումնական տարվանից, որպես անբաժանելի հավելված, կցվել են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերին: Ընթացքի մեջ է ինժեներատեխնիկական համակազմի աշխատողների աշխատանքի նկարագրերի մշակումը:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ»*: Ներկայումս ակտիվորեն ընթանում են ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ համակազմերի և ԵՊՀ գրադարանի աշխատողների մասնագիտական վերապատրաստման ու որակավորման բարձրացման համալիր ծրագրի մշակման և պլան-ժամանակացույցի կազմման աշխատանքները: Նախատեսվում է 2019 թ. մարտից իրականացնել նշված տարակարգերի աշխատողների մասնագիտական վերապատրաստում: Նաև նախատեսվում է 2019 թ. հունիսին անցկացնել ուսումնաօժանդակ համակազմի աշխատողների ատեստավորում, որի միջոցով որոշվելու է նրանց համապատասխանությունը զբաղեցրած պաշտոններին: Վերապատրաստման և ատեստավորման գործընթացը կրելու է պարբերական բնույթ և ներառելու է ԵՊՀ բոլոր ստորաբաժանումների աշխատողներին:



*Խնդիր 4.3-ով սահմանված է. «Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը»:*

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության»: Ըստ ժամանակացույցի՝ այս գործողությունը պետք է իրականացվի 2016-2020 թթ.: Հաշվետու՝ 2017/2018 ուստարվա սեպտեմբերի 1-ից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի յուրաքանչյուր մեկ հաստիքի ամսական դրույքաչափը բարձրացվել է 10000 (տասը հազար) ՀՀ դրամով:

ԵՊՀ աշխատողների հիմնական ամսական աշխատավարձի չափը ևս 15 տոկոսով բարձրացվել է ընթացիկ ուստարվա սեպտեմբերի 1-ից:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ներդնել սոցիալական աջակցության բազմաբնույթ ծրագրեր»: Այս նպատակով ԵՊՀ-ն դեռևս նախորդ տարի շուրջ 2000 հիմնական աշխատողի համար ապահովագրական ընկերությունից մրցութային կարգով ձեռք էր բերել բժշկական ապահովագրության փաթեթ: Այն հնարավորություն է տալիս ապահովագրության միջոցով իրականացնել տարեկան կանխարգելիչ հետազոտություն, աշխատողների տարեկան պարտադիր բժշկական զննում, շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն, պայմանագրով նախատեսված հիվանդությունների ամբուլատոր և ստացիոնար բուժում, քրոնիկ հիվանդությունների սրացման բուժում:

Նախորդ տարվա փաթեթին այս տարի ավելացվել է նաև պլանային վիրահատություններ կատարելու հնարավորությունը:

*5-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի, հանգստի և մարզաառողջարանային բազաների պայմանները, ապահովել դրանց մատչելիությունը բոլոր աշխատողների և սովորողների համար*»: Այս գործողության իրագործման նպատակով ձեռնարկվել են մի շարք գործընթացներ: Մասնավորապես, ավարտին են հասցվել նոր ուսանողական հանրակացարանի կառուցման աշխատանքները, որը նախատեսված է շուրջ 300 ուսանողի համար: Հանրակացարանն ունի երկտեղանոց սենյակներ՝ առանձին լվացարաններով, առկա է նաև մեկ մեծ ճաշարան, և յուրաքանչյուր հարկում՝ խոհանոց:

Նշված գործողության կատարման ուղղությամբ պարբերաբար իրականացվում է մշտադիտարկում՝ կապված ԵՊՀ տարածքում գործող հասարակական սննդի օբյեկտներում գնագոյացման քաղաքականության և սննդի որակի հսկողության հետ: Պարբերաբար ուսումնասիրվում են նաև Ծաղկաձորի «Համալսարանական» ուսումնասարտադրական բազայում ԵՊՀ աշխատողների ու նրանց ընտանիքի անդամների և ուսանողների համար հանգստի կազմակերպման գնային քաղաքականության մատչելիությունը և տեղում իրականացվող սննդի որակի ապահովումը: Միննույն ժամանակ, դեռևս չեն իրականացվել Հանքավանի և Բյուրականի ուսումնասարտադրական և Դիլիջանի մարզաառողջարանային բազաների վերակառուցման և/կամ վերանորոգման աշխատանքները:

## V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

*Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:*

**«Որակյալ ենթակառուցվածքներ»** ռազմավարական նպատակի *Խնդիր 5.1*-ով սահմանված է. **«Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները»:**

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. **«Տեխնոլոգիապես վերագինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները»:** Այս գործողության առնչությամբ ԵՊՀ ուսումնական մասնաշենքերում կատարվել է լսարանների մասնակի կամ ամբողջական վերանորոգում (թիվ 1 մասնաշենքի ուսումնական լաբորատորիաների օդափոխության համակարգեր, 115 և 201 սենյակներ, թիվ 2 մասնաշենքի 421 լսարան, թիվ 5 մասնաշենքի 304 լսարան և 318 սենյակ, թիվ 6 մասնաշենքի 316 սենյակ և ուսանողական խորհրդի սենյակ, թիվ 7 մասնաշենքում 301 և 302 թարգմանչական լսարաններ, ուսանողական խորհրդի սենյակ), ինչպես նաև թիվ 7 մասնաշենքի ձայնագրման ստուդիայի կառուցում:

Խնդիր 5.1-ի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. **«Վերանորոգել և արդիականացնել գիտական լաբորատորիաները»:** Արդիականացվել է մեկ գիտական լաբորատորիա թիվ 4 մասնաշենքի նկուղային հարկում:

Ավարտվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի ստեղծման աշխատանքները: 2018 թ. փետրվարի 27-ին ՀՀ ԿԳ նախարարի մասնակցությամբ տեղի է ունեցել կենտրոնի հանդիսավոր բացումը:

Խնդիր 5.1-ի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Ստեղծել լեզուների ուսուցման կենտրոնի ենթակառուցվածք»: Հաշվետու ուստարում լեզուների ուսուցման կենտրոնի ենթակառուցվածք չի ստեղծվել՝ կապված ֆինանսական միջոցների անբավարար լինելու հետ:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. «Արդիականացնել դահլիճների և սրահների տեխնիկական հագեցվածությունը»: Հաշվետու ուստարում ձեռք են բերվել ավելի քան 25 մլն դրամ արժողությամբ Taiden հանրահայտ արտադրողի սինխրոն թարգմանության սարքավորումներ (91 օգտվողի համար) տարբեր դահլիճներում օգտագործելու համար: Ձեռք է բերվել նաև շարժական բարձրախոսների երկու կոմպլեկտ:

Նշված խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. «Արդիականացնել մարզահամալիրը»: Ավարտվել են ԵՊՀ մարզահամալիրի հիմնանորոգման աշխատանքները: Հաշվետու ուստարում կատարվել են մասնաշենքի ներքին հարդարման և ձևափոխման, ինչպես նաև բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ: Ներդրումների ծավալը կազմել է շուրջ 1.2 մլրդ ՀՀ դրամ:

Խնդիր 5.1-ի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. «Վերակառուցել Դիլիջանի մարզաառողջարանային համալիրը»: Ֆինանսական մի-

ջոցների անբավարար լինելու պատճառով համապատասխան աշխատանքներ չեն կատարվել:

Վերոնշյալ խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «*Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ*»: Այս ուղղությամբ ԵՊՀ ուսումնական մասնաշենքերում կատարվել են միջանցքների, նկուղային հարկերի, տարբեր աշխատասենյակների, լաբորատորիաների, սանհանգույցների, տանիքների (մասնակի կամ ամբողջությամբ), ջեռուցման և օդափոխության համակարգերի վերանորոգման աշխատանքներ: Իրականացվել են առանձին հատվածներում մասնաշենքերի արտաքին երեսապատման աշխատանքներ: ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նկուղային հարկում կատարվել է մասնակի նորոգում, կառուցվում են ժամանակակից պահանջներին համապատասխանող սանհանգույցներ: Վերանորոգվել են թիվ 1 մասնաշենքի նախամուտքը, աստիճանավանդակները և 1-ին, 2-րդ հարկերի միջանցքները: Թիվ 3-4 մասնաշենքի մուտքի աստիճանների կողքերին տեղադրվել են մետաղական բազրիքներ՝ նախատեսված հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: Թիվ 5 մասնաշենքում մասնակի վերանորոգվել են միջանցքները, լսարանները, թիվ 6 մասնաշենքում՝ ուսանողական խորհրդի սենյակը, 001 և 003 լսարանների մանրահատակը, թիվ 7 մասնաշենքում՝ թարգմանչական լսարանները և ուսխորհրդի սենյակը, թիվ 8 մասնաշենքում կատարվել է հատակի մասնակի վերանորոգում:

Խնդիր 5.1-ի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Վերանորոգել և արդիականացնել գրադարանի ընթերցասրահներն ու գրապահոցը*»: Այս ուղղությամբ, «Իզմիրլյան» հիմնադրամի կողմից վերանորոգվել են գրադարանի պատշգամբները, միջանցքները և ճեմասրահը, տանիքի վրա տեղադրվել են ձյան/սառույցի հալեցման սարքեր՝ կաթոցներից խուսափելու համար, միջանցքների և պատշգամբների դռները փոխարինվել են նորերով: Վերանորոգվել է նաև գրադարանի դրսի պատշգամբը: Գրադարանի ներքին պատշգամբներում փոխարինվել և ավելացվել են լուսատուները, տեղադրվել են հոսանքի կետեր օգտվողների համար: Համալսարանի կողմից ընթերցասրահներում տեղադրվել են գրականության սկանավորման սարքեր, պատշգամբներում և ճեմասրահում՝ սեղաններ, ինչպես նաև նոր գրադարանային աթոռներ: Գրադարանի մասնաշենքում տեղադրվել են տեսանկարահանող սարքեր:

Խնդիր 5.1-ի *9-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել հանրակացարանային բազան»*: Ավան համայնքում Ծարավ Աղբյուրի 55/5 հասցեում գտնվող նախկին Միջազգային կրթական կենտրոնի մասնաշենքը հիմնանորոգվել է՝ շուրջ 300 ուսանողի համար նախատեսված հանրակացարանային համալիր ունենալու նպատակով: Հանրակացարանը կառուցվել է ամերիկահայ բարերար Ջորջ Ասատուրյանի կողմից ԵՊՀ-ին կտակված մեկ մլն դոլար գումարի և ԵՊՀ միջոցների հաշվին:

Խնդրի *10-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Զարգացնել ուսումնական մասնաշենքերի հսկողության ենթակառուցվածքը*»: Արդիականացվել է անվտանգության ծառայության կողմից օգտագործ-

վող տեսահսկման համակարգը: Կենտրոնական և թիվ 7 մասնաշենքերում, ինչպես նաև բակային տարածքներում տեղադրվել են նոր տեսախցիկներ, որոնց միջոցով ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի պահակակետից իրականացվում է դիտարկում:

Խնդիր 5.1-ի *11-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Արդիականացնել օպերատիվ տպագրական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածքը»*: Օպերատիվ տպագրական ենթակառուցվածքի արդիականացման աշխատանքներ հաշվետու ժամանակահատվածում չեն իրականացվել:

*Խնդիր 5.2-* ով սահմանված է. *«Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները»*:

Այս խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ստեղծել «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ՝ վարչական, ուսումնական գործընթացներին (առարկայական ծրագրեր, հարցաշարեր, գրականություն և այլն) առնչվող տեղեկատվությամբ»*: Համաձայն ժամանակացույց-պլանի՝ նշված գործողության կատարումը նախատեսված է ավարտել 2018 թ. դեկտեմբերին: Այդ ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ուսանողի էլեկտրոնային փոստի համակարգը զարգացնելու աշխատանքները, ներդրվել է այլընտրանքային էլեկտրոնային փոստով գաղտնաբառի վերականգման մեխանիզմը, իրականացվել են հասցեն և գաղտնաբառը գրանցող մոդուլի զարգացման աշխատանքները: Շարունակվել են SS կրթական և հե-

տագնուտական կենտրոնի կողմից վարվող «ԵՂՀ Moodle» համակարգի (<http://iterc.yasu.am>) մշակման աշխատանքները:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ձարգացնել ներքին համակարգչային օպտիկամանրաթելային, լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը»: Իրականացվել են ինտերնետ մուտքային հանգույցի փոփոխության աշխատանքներ, որի արդյունքում հնարավոր է դարձել ապահովել մուտքային և ելքային ինտերնետի մինչև 100 Մբ/վ արագություն՝ առանձնացված հայկական և այլ տիրույթների համար: Ընթացիկ աշխատանքներին զուգահեռ իրականացվել են Քիմիայի ֆակուլտետի վերանորոգված հատվածների ներքին ցանցի վերափոխման աշխատանքներ: Ներքին համակարգչային և հեռախոսային ցանցի բարելավման համար հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մոտ 1800 մ գծային մոնտաժման աշխատանքներ: Հաշվի առնելով ցանցային սարքավորումների և ներքին համակարգերի ավելացման միտումները՝ իրականացվել են ներքին ցանցի կարիքների գնահատման աշխատանքներ: Արդյունքում նախատեսվում է ցանցի հիմնական հանգույցներում տեղակայված սարքավորումները փոխարինել ավելի բարձր թողունակությամբ սարքերով, որոնք կապահովեն մասնաշենքերի և հիմնական հանգույցների միջև կապի թողունակության բարձրացում մինչև 10 Գբ/վ՝ այժմյան 1 Գբ/վ-ի փոխարեն: Նպատակ ունենալով համասարանականների համար ստեղծել WiFi հասանելիությամբ աշխատանքային գոտիներ՝ ձեռք են բերվել բարձր տեխնիկական հատ-



կանիշներով WiFi 15 հատ սարքավորումներ, որոնք նախատեսվում է տեղադրել մինչև տարեվերջ:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Արդիականացնել համալսարանական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը»*: Հաշվետու ժամանակահատվածում սերվերային ռեսուրսները համալրվել են ևս մեկ սերվերով, որն ամբողջությամբ օգտագործվում է գրադարանային համակարգերի աշխատանքն ապահովելու համար: Սերվերային համակարգերի վիրտուալիզացման արդյունքում ներդրվել է տվյալների պահուստային պատճենավորման նոր համակարգ, որը հնարավոր է դարձնում իրականացնել սերվերային համակարգերի ամբողջական պահուստային պատճենավորում: Բացի այդ, պահուստային պատճենավորման համար ձեռք է բերվել և կիրառության մեջ է դրվել 50 TB տարողությամբ ցանցային կուտակիչ սարք:

Վերոնշյալ խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել ներքին տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության մակարդակը»*: Ինտերնետային ռեսուրսները նպատակին ծառայեցնելու համար հաշվետու ժամանակահատվածում փորձարկվել և ներդրվել է ինտերնետային ռեսուրսների մոնիթորինգի և կառավարման նորագույն համակարգ:

Խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ»*: Աշխատանքային խումբը մշակել է ԵՊՀ գրադարանի զարգացման հայեցակարգի նախագիծը, որը քննարկվել է ինչպես ռեկտորատի անդամների կողմից, այնպես էլ ԵՊՀ գիտական խորհրդի 2018 թ. հունիսի 28-ի նիստում: Ներկայացված

դիտողությունների և առաջարկությունների հիման վրա կատարվել են փոփոխություններ նախագծում:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը, ապահովել գրադարանի էլեկտրոնային քարտարանի ամբողջական ձևավորումն ու շահագործումը»*: Գրադարանի քարտարանի էլեկտրոնային եղանակով շահագործումը շարունակելու և աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շահագործվել է «KOHА» համակարգը: Ներդրվել է ԵՊՀ գրադարանի համապատասխան ստորաբաժանումների աշխատողների լրավճարի համակարգը, որի արդյունքում ավելի քան 4 անգամ մեծացել են մուտքագրման ծավալները: Թվայնացվել է շուրջ 150 գիրք, և քարտարան է մուտքագրվել շուրջ 44000 անուն գրականություն:

Խնդրի 8-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել Համալսարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին»*: ԵՊՀ-ն շարունակել է իր անդամակցությունը «IFLA» և «LIBER» միջազգային գրադարանային ասոցիացիաներին, ինչպես նաև Հայաստանի գրադարանների ասոցիացիային և Հայաստանի էլեկտրոնային գրադարանների ասոցիացիային («ELCA»): Գրադարանը պահպանել է բաժանորդագրությունը ռուսական elibrary.ru գիտատեղեկատվական ցանցին, որի միջոցով հասանելի են ցանցի ավելի քան 1200 անուն ռուսալեզու պարբերականների էլեկտրոնային տարբերակները:

Գրադարանը գերմանական «Subito» կազմակերպության միջոցով կատարում է էլեկտրոնային հոդվածների սպասարկում օգտվողներին:

Ծրագրի շրջանակներում 2017/2018 ուսումնական տարվա ընթացքում սպասարկվել է ավելի քան 3300 գիտական հոդված:

Գրադարանը բաժանորդագրված է «Springer» էլեկտրոնային գրադարանին, որում ընդգրկված է 2.765 գիտատեխնիկական ամսագիր, ինչպես նաև «EBSCO» հրատարակչությանը, որը հնարավորություն է ընձեռում օգտվելու բազմաթիվ շտեմարաններից:

Խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը»*: Գրադարանը շարունակել է նոր գրականության համալրումը: Գրադարանային ֆոնդը համալրվել է ավելի քան 725 անուն 12778 միավոր գրականությամբ:

Խնդրի *10-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել գրադարանային ծառայությունների որակը, ընդլայնել ընթերցասրահների և համակարգչային սրահների աշխատաժամերը»*: ԵՊՀ ռեկտորի հրամանով ձևավորվել էր գրադարանի աշխատանքները ուսումնասիրող հանձնաժողով, որի ներկայացրած առաջարկություններն ու դիտողությունները արտացոլված են գրադարանի զարգացման հայեցակարգի նախագծում: Փոփոխություն է կատարվել գրադարանի ընթերցասրահներից մեկի աշխատաժամանակում՝ այն երկարացնելով մինչև ժ. 19.00-ն: Տվյալ ընթերցասրահ են տեղափոխվել այլ ընթերցասրահների առավել հաճախ օգտագործվող գրականությունից օրինակներ:

## VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:*

**«Որակյալ ծառայություններ»** ռազմավարական նպատակի *Խնդիր 6.1*-ով սահմանված է. **«Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով»:**

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է *«Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից»:* Համապատասխան դրամաշնորհ դեռևս չի ստացվել:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ձարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները»:* ԵՊՀ մի շարք ստորաբաժանումների (Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն, տարբեր կրթագիտական կենտրոններ) և ուսանողական կազմակերպությունների (Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն) կողմից իրականացվել են դասընթացներ և կրթական բնույթ ունեցող այլ ծրագրեր: Որոշ նախաձեռնություններ իրականացվել են գործընկեր ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակում, հրավիրվել են ոլորտի հայտնի փորձագետներ: Պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացներ

րին հաշվետու ուսումնական տարվա ընթացքում մասնակցել են ավելի քան 1800 ուսանող և շրջանավարտ:

Ուշագրավ են հատկապես տարբեր օտար լեզուների՝ անվճար և վճարովի հիմունքներով կազմակերպվող դասընթացները (ռուսերեն, անգլերեն, չինարեն, ադրբեջաներեն և այլն), «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության հետ համատեղ իրականացված «Տեղահանված հայ երիտասարդ մասնագետների աշխատանքի աջակցում» ծրագիրը, «Զբոսավարների հմտություններ» խորագրով եռամսյա դասընթացը:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ներդնել առարկայական խորհրդատվությունների համակարգ բակալավրի ծրագրի առաջին կուրսի ուսանողների համար, որոնք կիրականացնեն ավարտական կուրսերի ուսանողները, մագիստրանտները և ասպիրանտները»*: Այս նպատակով Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի, Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության կողմից մի շարք ֆակուլտետներում կազմակերպվել են պարբերական բնույթ ունեցող տարբեր խորհրդատվական միջոցառումներ: Ուշագրավ են հատկապես Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի, Կենսաբանության, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետներում իրականացվող սեմինար-խորհրդատվությունները: Առաջին կուրսեցիների համար կազմակերպվել է ամենամյա «Ուսանողական հիմնախնդիրները ԵՊՀ-ում» երկփուլ սեմինար-դասընթացը, որի նպատակը ուսանողնե-

րին ներհամալսարանական տարբեր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն էր:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «*Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները*»: Այս նպատակով Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի ջանքերով ստեղծվել և ակտիվորեն գործում են Մարտական պատրաստության, Բնապահպանական, Ֆրանկոֆոնիայի ակումբները: Արդեն ավանդաբար կազմակերպվող մեծածավալ ծրագրերից է «Համահայկական ուսանողական ռազմական բանակումը» Արցախի Հանրապետությունում, որի նպատակն է զարգացնել ուսանողների մարտական և ֆիզիկական պատրաստության վիճակը, աջակցել ռազմահայրենասիրական դաստիարակությանը, տեսական և գործնական դասընթացների միջոցով զարգացնել ուսանողների ռազմագիտական և ռազմաքաղաքական գիտելիքներն ու հմտությունները:

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ գործում է «Բանավեճի ակումբը», անցկացվել են պարբերական բնույթ ունեցող ինտելեկտուալ խաղ-մրցույթներ՝ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ», «Գուշակյիր մեղեդին», «Երգող համալսարանական», «Պարող համալսարանական», «Ասմունքող համալսարանական»: Իրականացվել են տարբեր սպորտային մրցույթներ (ֆուտբոլ, շախմատ, բասկետբոլ, վոլեյբոլ և այլն):

Մշակույթի կենտրոնում գործում են երգչախումբը, պարային համույթը, «Համալսարանական» թատրոն-ստուդիան, ժողգործիքների

նվագախումբը և այլ խմբեր: Հարկ է առանձնացնել թատրոն-ստուդիայի կողմից Վարդգես Պետրոսյանի «Հայկական էսքիզներ» ստեղծագործության համանուն ներկայացման բեմադրման պրեմիերան:

Ակտիվ գործունեություն է ծավալում նաև «Վարդանանք» ռազմա-հայրենասիրական դաստիարակության ակումբը: Հայրենաճանաչողական ծրագրերի շրջանակներում շուրջ 2500 ուսանող մասնակցել է կազմակերպված էքսկուրսիաներին դեպի ՀՀ պատմամշակութային վայրեր և թանգարաններ: ԵՊՀ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հինգ տարբեր մեծ ծրագրերով այցելել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Նշված խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը»:* ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կազմակերպել է տարաբնույթ միջոցառումներ համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողների և շրջանավարտների համար, ուսանող-գործատու հանդիպում-քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, մրցունակ և կայացած աշխատակից լինելու հիմնական գործոնները, երկարատև կարիերայի կառուցման նրբությունները և այլն:

Առանձնահատուկ կարելի է նշել կենսատեխնոլոգիայի ոլորտում գործունեություն ծավալող «Էֆ Էմ Դի Քեյ Էլ Եվրոպա» և «Էֆ-Դի-Էյ Լաբորատորիա» ՍՊԸ-ների հետ համագործակցության շրջանակներում ուսանողների և շրջանավարտների այցելություններն ու հանդիպումները ընկերությունում, «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնա-

դրամի հետ համագործակցության շրջանակում իրականացված «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» կրթաթոշակային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ուսանողները հնարավորություն են ստացել մասնակցելու վերապատրաստման դասընթացների, ապա ներկայացրել են իրենց համայնքի զարգացման համար ծրագրեր: Տասը լավագույն ծրագրերի հեղինակները ստացել են մագիստրատուրայում ուսումնառության ամբողջական վարձի լրիվ փոխհատուցում:

Ուսումնական տարվա ընթացքում «Breedge» կազմակերպության հետ համատեղ նախաձեռնությամբ ԵՊՀ-ում կազմակերպվել է «Internship Hunt. Որոնի՛ր և գտի՛ր քո հնարավորությունը» խորագրով տոնավաճառը: Տոնավաճառին ինտերնշիփի առաջարկով հանդես է եկել 18 գործընկեր կազմակերպություն, իսկ մասնակիցների թիվը 300-ից ավել էր:

Ձեռնարկությունների հետ համագործակցությունը խթանելու և արդյունավետ դարձնելու նպատակով ակտիվորեն շահագործվում է նաև Ձեռնարկությունների հետ համագործակցության ինտերնետային պորտալը ([ysu.am/cooperation](http://ysu.am/cooperation)):

Հաշվետու ուսումնական տարում կամավորական աշխատանքների և ուսանողական պրակտիկայի (ինտերնշիփ) կազմակերպման շրջանակում կենտրոնը համագործակցել է 35 տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: Համագործակցության արդյունքում 156 համալսարանական ներգրավվել է ծրագրերում: Գործընկեր կազմակերպությունները թափուր աշխատատեղերի համալրման նպատակով ներկայացրել են 340 հայտ, որոնց արձագանքած 2410 համալսարանականից աշխատանքի է ընդունվել 67-ը:



*7-րդ գործողությամբ նախատեսված է. «Նպաստել ուսանողների ձեռներեցության հստությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը»:*

ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոնը, համագործակցելով ձեռներեցության և ստարտափների խթանման ուղղությամբ գործող տարբեր կառույցների հետ, շարունակել է իրականացնել ուսանողների նորարարական և ձեռներեցական նախաձեռնություններին նպաստող ծրագրեր:

2017 թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ նորարարությունն ու հետազոտական աշխատանքը խթանող «Ռուսալ փառատոն #Գիտություն» խորագրով ինտերակտիվ գիտափառատոնը: Փառատոնի ընթացքում կենտրոնական մասնաշենքում գործում էին «Գյուտարարություն», «Գիտություն», «Տեխնոլոգիաներ», «Ռոբոտաշինություն», «Այլումիսի արտադրություն» բնագավառները ներկայացնող տաղավարներ: Փառատոնի շրջանակում հանրապետության տարբեր դպրոցների շուրջ 3000 աշակերտ է այցելել Մայր բուհ: Կազմակերպված դասընթացներից հարկ է ընդգծել «Զարգացրո՛ւ ստեղծարարությունը և ստարտափ նախաձեռնությունը» երկօրյա սեմինարը, որն իրականացվել է Գերմանիայի միջազգային համագործակցության գործակալության (GIZ)՝ Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման ծրագրի շրջանակներում: Դասախոսություններով և գործնական առաջադրանքներով հանդես են եկել Գերմանիայից ժամանած փորձագետներ: Սեմինար-դասախոսություններին ընդհանուր առմամբ մասնակցել է ավելի քան 250 ուսանող:

*8-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունները»:* Այս խնդրի ուղղությամբ հաշվի առնելով ինտերնետային տեխնոլոգիաների հնարավորությունները՝ զարգացվում են համալսարանի կողմից ստեղծվող առցանց գործիքները: SS կրթական և հետազոտական կենտրոնի կողմից ներդրված «Moodle» էլեկտրոնային ուսուցման համակարգի միջոցով հնարավորություն է ընձեռվում համապատասխան նյութերը տեղադրել առցանց հարթակում և իրականացնել ուսանող-դասախոս շփումները (ավելի քան 100 դասախոս վերապատրաստվել է համակարգում աշխատելու համար):

Ստեղծվել և մշակման փուլում են գտնվում ներբուհական տեղեկատվական համակարգերը (տե՛ս սույն զեկույցի՝ 5.2.2. գործողությանը վերաբերող հատվածը), շարունակաբար մեծանում է ԵՊՀ գրադարանի թվայնացված գրականության հավաքածուն (տե՛ս սույն զեկույցի 5.2.7. գործողությանը վերաբերող հատվածը):

*9-րդ գործողությամբ նախատեսված է. «Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար»:* Այս ուղղությամբ աշխատանքներ են տարվել կրթագիտական ստորաբաժանումներում սովորող և առանձնահատուկ կարիք ունեցող ուսանողների կարիքները գնահատելու, դասակարգելու և անհրաժեշտ խորհրդատվություն և այլ աջակցություն տրամադրելու աշխատանքները առավել համակարգված դարձնելու ուղղությամբ:

10-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել շրջանավարտների հետ Համալսարանի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները»: ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը շարունակել է համալրել շրջանավարտների տվյալների բազան (բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտները դիպլոմներ ստանալու գործընթացի ժամանակ լրացնում են համապատասխան հարցաթերթիկները): ԵՊՀ 100-ամյակի միջոցառումները նախապատրաստող հանձնաժողովի կողմից մշակվող հոբելյանական միջոցառումների ծրագիրը նախատեսում է անվանի շրջանավարտների ակտիվ մասնակցություն և ներգրավում իրականացվող ծրագրերում:

***Խնդիր 6.2-ով սահմանված է. «Զարգացնել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը»:***

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ»:

Ուսանողական խորհուրդը առաջին կուրսեցիների համար անցկացրել է ամենամյա «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում» երկփուլ սեմինար-դասընթացը: Ծրագրին մասնակցել է շուրջ 360 առաջին կուրսեցի, որոնց մեծ մասը հետագայում համալրել է ՈւԽ ակտիվ անդամների շարքերը: ՈւԽ կայքը և ֆեյսբուք-

յան էջը գործել են բավականին ակտիվ և ունեցել զգալի որակական տեղաշարժեր: Հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է լույս տեսնել նաև «Ալեք Մանուկյան 1» թերթը:

Տարբեր ֆակուլտետներում իրականացվել են ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման միջոցառումներ: Շարունակել է գործել «ՈւԽ զարգացում» դպրոցը, որի նպատակն է ոչ ֆորմալ կրթության միջոցով նպաստել ուսանողների հմտությունների ու կարողությունների զարգացմանը: Ծաղկաձորի ուսումնասարտադրական բազայում իրականացվել է երկօրյա «Ուսանողների զարգացում» ծրագիրը:

Խնդիր 6.2-ի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Խթանել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը»*: Հաշվետու ժամանակահատվածում ՈւԽ-ն կազմակերպել է «Ուսանողական ինքնակառավարում» 4-րդ ամենամյա ուսանողական համաժողովը (2017 թ. դեկտեմբերի 1-5): Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել են ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 70-րդ տարեդարձին նվիրված միջազգային տարեկան 4-րդ (2017 թ. հոկտեմբերի 2-6) և Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված միջազգային տարեկան 5-րդ (2018 թ. ապրիլի 16-20) գիտական նստաշրջանները: ՈՒԳԸ միջազգային նստաշրջաններին գիտական զեկուցմամբ մասնակցել են ՀՀ այլ բուհերի 214 ուսանող և 85 օտարերկրացի: «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական

պարբերականում հրապարակվում են նաև ՀՀ այլ բուհերի սովորողների հոդվածները:

ՈԻԳԸ-ի գործուն անդամները ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ պետական բուհերի կողմից կազմակերպված գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումներին: ԵՊՀ ՈԻԽ և ՈԻԳԸ աշխատանքներում ներգրավված ուսանողները մասնակցել են միջազգային գիտաժողովների ու համաժողովների Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում և Եկատերինբուրգում (ՌԴ), Բելգրադում (Սերբիա), Փարիզում (Ֆրանսիա), Մյունխենում (ԳԴՀ), Վիեննայում (Ավստրիա), Ռժեշովում (Լեհաստան) և այլ երկրներում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հետ համատեղ Ս. Էջմիածնում կազմակերպվել է ավանդական դարձած միջոցառումը՝ նվիրված Վարդանանց նահատակներին, որին մասնակցել են նաև ՀՀ այլ բուհերի ուսանողներ:

Համալսարանականները մասնակցել են միջազգային, հանրապետական և համահամալսարանական մրցույթների և փառատոների («Հանրապետության լավագույն ուսանող-2017», միջազգային քրեական իրավունքին նվիրված համաշխարհային դատախազ-մրցույթ, մաթեմատիկայի և ծրագրավորման միջազգային օլիմպիադաներ, միջբուհական ունիվերսիադա, ֆրանսիական երգի մրցույթ և այլն):

Խնդիր 6.2-ի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈւԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը»:*

ՈԻԳԸ միջոցառումներից կարևոր նշանակություն ունի գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցման ամենամյա

ծրագիրը, որի շրջանակներում ուսանողները ծանոթանում են գիտական հոդված գրելու, դաշտային հետազոտություն իրականացնելու և մեթոդաբանական տեսական ուսումնասիրություններ կատարելու հմտություններին:

Ուստարվա ընթացքում Ռոմանագերմանական բանասիրության և Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետների համագործակցության արդյունքում կազմակերպվել է «Ընդհանուր մասնագիտական անգլերեն» դասընթացը (2018 թ. փետրվար-մայիս), Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի համագործակցության արդյունքում կազմակերպվել է «Զբոսավարների հմտություններ» խորագրով եռամսյա դասընթացը (2018 թ. մարտ-մայիս), Իրավագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ-ի կողմից՝ «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն» խորագրով բուհական դատախազը, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈԻԳԸ ջանքերով՝ պաղեստինա-իսրայելական հակամարտությանը նվիրված «ՄԱԿ մոդել» համաժողովը և այլն:

ՈԻԳԸ-ն հաշվետու ժամանակաշրջանում հրատարակել է ՀՀ ԿԳՆ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխանող ՈԻԳԸ գիտական հոդվածների 2017 թ. ժողովածուն (194 գիտական հոդված):

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ձարգացնել Համալսարանի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:*

«Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» նպատակի *Խնդիր 7.1*-ով սահմանված է. *«Ձարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով»:* Խնդրի իրականացման նպատակով նախատեսված բոլոր գործողությունների համար սահմանված է կատարման ժամկետ՝ 2016-2020 թթ.: Դիտարկվող ժամանակահատվածի համար նախատեսված գրեթե բոլոր գործընթացներն իրականացվել են:

ԵՊՀ ղեկավարությունը շարունակել է հետևողական աշխատանքը այս խնդրի *1-ին և 2-րդ գործողությունների* իրականացման ուղղությամբ, որոնցով նախատեսված է համալսարանի կառուցվածքում ստեղծել հենակետային վարժարան և նպաստել նրա շրջանավարտների ներհոսքին ԵՊՀ, ինչպես նաև քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար: Այդուհանդերձ, ձեռնարկված գործընթացները դեռևս ցանկալի արդյունք չեն տվել:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ձարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը»: Այս նպատակով 2017/2018 ուստարում հրատարակվել են բակալավրիատի կրթական ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող գովազդային նյութեր («Դիմորդի ուղեցույց-2017» ձեռնարկը՝ 2500 տպաքանակով), ինչպես նաև ԵՊՀ-ն և ֆակուլտետները ներկայացնող գունավոր բուկլետներ (10000 տպաքանակով): Դրանք բոլորն անվճար բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին:

Կատարելագործվել է դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը ԵՊՀ պաշտոնական կայքում՝ ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ բակալավրիատի ընդունելության կարգը և «Դիմորդի ուղեցույց - 2018»-ը կայքում տեղադրելու միջոցով:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը»: 10 տարի անընդմեջ ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար կազմակերպվում և անցկացվում է հանրակրթական 14 առարկաների գծով օլիմպիադա: 2018 թ. երրորդ անգամ օլիմպիադան անցկացվել է 2 փուլով. մասնակիցների թիվը 1-ին փուլում 2186 էր, իսկ 2-րդ փուլում՝ 402: Օլիմպիադայի անցկացման մեջ մեծ է ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների օլիմպիական հանձնաժողովների (դեկանների գլխավորությամբ) կատարած աշխատանքը: ԵՊՀ գլխխորհրդի որոշմամբ 2018 թ. օլիմպիա-



դայի 2-րդ փուլում հաղթած և 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմների արժանացած 87 աշակերտներից 19-ը, որոնք ընդունվել են ԵՊՀ վճարովի համակարգ, առաջին կուրսում կստանան համապատասխանաբար 50, 40 և 30 % ուսման վարձի զեղչ:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«ԵՊՀ-ում պարբերաբար կազմակերպել տարբեր մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներ» հանրապետության ավագ դպրոցների աշակերտների համար»:* Այս առումով, ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող 15 դպրոցների հիմնականում հումանիտար հոսքերի 10-11-րդ դասարանների 44 աշակերտի համար 2018 թ. Ծաղկաձորի «Համալսարանական» բազայում կազմակերպվել է «Ամառային դպրոց» «Հայոց լեզու» և «Հայ ժողովրդի պատմություն» առարկաներից: Անհրաժեշտ ծախսերի 80 տոկոսը (4 մլն դրամ) տրամադրել է ԵՊՀ -ն:

6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան»:* Համաձայն գործողության՝ Երևանի և մարզերի 100-ից ավելի դպրոցների 4700-ից ավելի ապագա դիմորդների համար, մասնագիտական կողմնորոշման նպատակով, կազմակերպվել են «Բաց դռների օրեր» և նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ:

7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութե-*

րով»: Համաձայն այս գործողության՝ դիմորդների հավաքագրման նպատակով ակտիվ աշխատանքներ են կատարվել ՀՀ բոլոր մարզերում, այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովվել են անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:

Խնդիր 7.1-ի 8-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ԵՊՀ դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը»:* Այս գործողության իրականացմանն ուղղված՝ ՀՀ հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանն աջակցելու նպատակով 2017/2018 ուստարում մայրաքաղաքի 16 ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 92 հեղինակավոր և փորձառու դասախոսներ 29 լրացուցիչ կրթական ծրագրով հատուկ դասընթացներ են վարել ԵՊՀ միջոցների հաշվին: Միննույն ժամանակ, ՀՀ մարզերի շուրջ 2 տասնյակ դպրոցներում ԵՊՀ դասախոսների կողմից իրականացվել է 146 առանձին դասախոսություն՝ հանրակրթական տարբեր առարկաներից:

Խնդրի 9-րդ գործողությամբ նախատեսված է. *«ԵՊՀ դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում»:* Այս ուղղությամբ կատարվել է հետևյալը. ֆակուլտետների ղեկանների աջակ-

ցությամբ և դասախոսական կազմի լայն ներգրավվածության շնորհիվ Երևանի և ՀՀ մարզերի 76 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվել են 280 ակնարկային և բովանդակային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, ինչպես նաև ուսուցիչների համար մեթոդական խորհրդատվություններ:

*Խնդիր 7.2-ով սահմանված է. «Օպտիմալացնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը»:*

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը»: Այս գործողության կատարման առնչությամբ՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված աշխատանքները վերաբերել են բակալավրի կրթական ծրագրերին (առկա և հեռակա): Ինչպես և մագիստրոսական նոր կրթական ծրագրեր ստեղծելու դեպքում էր, բակալավրի նոր կրթական ծրագրեր ստեղծելու գործընթացներն օպտիմալացնելու նպատակով մշակվել է կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթ, որը ներկայացվել է ուսումնական ստորաբաժանումներին՝ աշխատանքային խմբերի կողմից լրացվելու: Հայտի ձևաթերթում առանձին կետերով առաջադրված են հստակ պահանջներ, մասնավորապես՝ ծրագրի ընդհանուր բնութագիրը (կրթական ծրագրի անվանումը,

շնորհվող որակավորումը), ընդունելության չափաքանակները, նոր ծրագրի ներմուծման հիմնավորումը (անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը), աշխատաշուկայի վերլուծությունը, ծրագրի նպատակները և կրթական վերջնարդյունքները, ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, դասախոսական կազմը և այլն:

Բակլավալրի կրթական ծրագրերի մշակման և հաստատման հետ կապված անհրաժեշտ բոլոր գործընթացներն իրականացվել են սահմանված ժամկետում:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. «Պարբերաբար վերանայել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ընդունելության կանոնակարգերը և կրթական ծրագրերի ցանկը»: Այս գործողության կատարմանն ուղղված՝ ԵՊՀ գիտական խորհրդի 2018 թ. մարտի 22-ի նիստի թիվ 5/1 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2018/2019 ուսումնական տարվա ընդունելության կարգը»: Նույն նիստի թիվ 5/2 որոշմամբ հաստատվել է նաև «Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2018/2019 ուսումնական տարվա ընդունելության կարգը»:

*3-րդ գործողության* կատարմանը միտված՝ բոլոր մակարդակների կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար իրականացվել են աշխատանքներ համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի կատարելագործման ուղղությամբ:

*Խնդիր 7.3*-ով սահմանված է. «Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի կրթական բոլոր աստիճաններում՝

***հրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ»:***

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել ընդունելության դռներ երկրների ցանկը, ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ներկայացուցչություններ»: Դռներ երկրների ցանկի ընդլայնման նպատակով շարունակվել են քայլեր ձեռնարկվել Մերձավոր Արևելքի և մի շարք այլ երկրներում ԵՊՀ-ն ներկայացնող տեղեկատու նյութերի տարածման ուղղությամբ: Մասնավորապես՝ ԵՊՀ և ՀՀ ԿԳՆ սփյուռքի բաժնի աշխատողների արտասահմանյան գործուղումների ընթացքում այդ երկրների հավանական դիմորդների շրջանում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր: Այդ թեմայով դասախոսություններ են կարդացվել սփյուռքահայ և այլ համայնքներում, ինչպես նաև Սփյուռքի նախարարության կողմից սփյուռքահայ ունկնդիրների համար կազմակերպված ամառային «Քայլ դեպի տուն» ծրագրի շրջանակներում:

2-րդ գործողությամբ նախատեսված է. «Քայլեր ձեռնարկել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար»: Այս գործողության կատարմանը միտված՝ որոշա-

կի քայլեր են ձեռնարկվել: Մասնավորապես, բանակցություններ են վարվել հնդկական M/C BLB կազմակերպության, Սանկտ-Պետերբուրգում գործող «Rusin» ՓԲԸ-ի հետ համագործակցող հնդկական «Bawaliye Education Pvt.LTD» կազմակերպության, Նոր Դելիի առաջատար բժշկական գիտությունների ինստիտուտի (DIAMS), Կանադական միջազգային լեզվական ակադեմիայի (գործում է նաև ԻԻՀ տարածքում), Իրաքյան Scientific Level Company (Իրաք, Էրբիլ) կազմակերպության, ինչպես նաև անհատ միջնորդ, պրոֆ. Շահդին Շահուզի (ԻԻՀ) հետ, որոնց հետ համագործակցության թույլտվություն ստանալու նպատակով համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ ԿԳՆ:

2017 թ. ընթացքում ստացվել են ՀՀ ԿԳ և ԱԳ նախարարությունների համաձայնությունը՝ համագործակցելու Իրաքյան “Scientific Level Company”-ի (Իրաք, Էրբիլ), Սանկտ-Պետերբուրգում գործող «Rusin» ՓԲԸ-ի հետ համագործակցող “Bawalia Education Pvt.LTD”-ի հետ: Ներկայումս քայլեր են ձեռնարկվում նշված կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու նպատակով: Միաժամանակ, 2018 թ. ընթացքում բանակցություններ են վարվել ՀՀ-ում Իրաքի դեսպանատան հետ, և նամակներ են հղվել Իրաքի բարձրագույն կրթության նախարարությանը, ինչպես նաև Իրաքում ՀՀ դեսպանին՝ Երևանի պետական համալսարանը որպես կրթական և հետազոտական միջազգային պահանջներին համապատասխանող կրթական հաստատություն ճանաչելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու խնդրանքով:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Համալսարանի կայքում ներկայացնել ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև Համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր»: Այս առնչությամբ հրատարակվել և վերահրատարակվել է ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ընդունելության և ուսումնառության պայմանների, համալսարանի, նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու-ուղեցույցը, որը համալսարանից գործուղվող աշխատակիցների, ՀՀ ԿԳՆ սփյուռքի բաժնի, ՀՀ դեսպանատների միջոցով տարածվել են օտարերկրյա պետություններում հավանական դիմորդների շրջանում: Նշված նյութերը տեղադրվել են նաև համալսարանի կայքում:

Միաժամանակ, 2017-2018 թթ. ընթացքում վերամշակվել և թարմացվել է տեղեկատու-ուղեցույցը, որը ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության միջոցով հրատարակվել է 2018 թ. ընթացքում: Այս նպատակով 2017 թ. կատարվել էր ուսումնասիրություն՝ պարզելու համար ԵՊՀ ֆակուլտետների՝ բակալավրիատում և մագիստրատուրայում անցվերենով առկա և հեռահար (distance-learning կամ e-learning) ուսուցման հնարավորությունները: Դրանց վերաբերյալ տվյալները փոխանցվել են նաև որոշ միջնորդ կազմակերպությունների՝ ուսանողների հավաքագրման նպատակով:

Արդեն 2017/2018 ուսումնական տարում ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտում մեկնարկել է «Ֆարմացիա» մասնագիտությամբ անցվերենով առկա ուսուցումը: Ներկայումս բանակցություններ են վարվում մի շարք միջնորդ կազմակերպությունների հետ՝ Իրաքյան Քրդստանի և

այլ շրջաններում նշված մասնագիտությամբ ուսանողների հավաքագրելու նպատակով:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Կատարելագործել նախապատրաստական կրթական ծրագրերը՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար»:* Այս գործողության կատարման նպատակով կատարելագործվել են նախապատրաստական կրթական ծրագրերը, մտցվել են դասընթացների կազմակերպման նոր մոդելներ, մշակվել և նորացվել են բոլոր առարկայական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով ընդունելության ընդունված չափանիշներին: Ներմուծվել է դասընթացների վարման երկփուլ տարբերակ՝ բաղկացած տարրական գիտելիքների յուրացման և հիմնական կրթական գիտելիքների մակարդակի՝ ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցման փուլերից: 2017/2018 ուսումնական տարվանից օտարերկրյա դիմորդների լեզվական գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով ավելացվել են «Հայոց լեզու» առարկային տրամադրվող դասաժամերը: Համապատասխան մասնագիտական խմբերի կազմավորման մոդելի կատարելագործման և դասաժամերի համակարգման շնորհիվ միաժամանակ տեղի է ունեցել ֆինանսական միջոցների խնայողություն:



## VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ,

### ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:*

Ռազմավարական 8-րդ նպատակի 8.1. խնդրով սահմանված է. **«Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները»:**

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Նպաստել Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ գիտակրթական ծրագրերին մասնակցության ընդլայնման միջոցով»: Կրթական ծրագրերի պետական ֆինանսավորման ծավալները 2014 թ-ից մինչև 2018 թ. յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատ ավելացել են, որը պայմանավորված է եղել մեկ ուսանողի համար սահմանված ուսանողական նպաստի չափի ավելացումով (2014 թ.՝ 596500 դրամ, 2015 թ.՝ 632415 դրամ, 2016 թ.՝ 648431 դրամ, 2017 թ.՝ 656640 դրամ): 2018 թ-ին ֆինանսավորման ծավալը նվազել է՝ պայմանավորված երկու հանգամանքով՝

1. նվազել է մեկ ուսանողի ուսանողական նպաստի չափը, որը կազմում է 639550 դրամ,

2. նվազել է ավագ դպրոցի շրջանավարտների թիվը՝ կապված 12-ամյա կրթական ծրագրի ներդրման հետ:

Գիտական ծրագրերի ֆինանսավորման ծավալները վերջին տարիներին եղել են կայուն, կազմել են տարեկան շուրջ մեկ միլիարդ դրամ: 2018 թ-ին ֆինանսավորման ծավալը նվազել է՝ կապված երկու հանգամանքի հետ՝

1. բոլոր գիտական ծրագրերի պետական ֆինանսավորման չափը նվազել է 7 տոկոսի չափով,
2. գիտական թեմատիկ դրամաշնորհային ծրագրերը 2018 թ-ին մեկնարկել են ոչ թե տարեսկզբից, այլ սեպտեմբերից:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Յուրաքանչյուր տարի վերանայել ուսման վարձավճարները՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների՝ պայմանավորված շուկայական գործոններով»:* 2017/2018 և 2018/2019 ուսումնական տարիների համար ուսման վարձավճարների չափերը չեն փոփոխվել:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ակտիվացնել Համալսարանի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին»:* ԵՊՀ տարեկան եկամուտներում էական մաս են կազմում դրամաշնորհային ծրագրերից ստացվող ֆինանսավորումները (2015 թ.՝ 452847 հազար դրամ, 2016 թ.՝ 750940 հազար դրամ, 2017 թ.՝ 654585 հազար դրամ, 2018 թ. 9 ամիսների ընթացքում՝ 320463 հազար դրամ): Այդ ծրագրերին մասնակցում է շուրջ 200 ԵՊՀ աշխատող:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները»: 2017 թվականին կանոնակարգվել են ԵՊՀ հյուրերի տան և մարզադահլիճների վճարովի ծառայությունները: Նախորդ տարիների համեմատ էապես՝ շուրջ 10 անգամ, ավելացել են մարզադահլիճների ծառայություններից եկամուտները: 2018 թ. հիմնովին վերանորոգվում է ԵՊՀ ուսանողական հանրակացարանը, ինչի արդյունքում նախատեսվում է նաև այդ ստորաբաժանման ծառայությունների ընդլայնումը: Չնայած վերը շարադրվածին՝ վճարովի ծառայություններից եկամուտները համալսարանի ընդհանուր եկամուտներում էական չեն, կազմում են շուրջ 2 տոկոս:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները»: ԵՊՀ-ում առանձին ստորաբաժանումների կողմից իրականացվող գիտակրթական ծրագրերին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով ԵՊՀ շրջանավարտների և այլ շահառուների հետ տարվում են գործընկերային աշխատանքներ: Մասնավորապես՝

- Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կազմում «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի» պահպանման, զարգացման և իրականացվող ծրագրերին աջակցություն են ցուցաբերել «Իմքս Գրուպ», «Ավանգարդ», «Գազպրոմ Արմենիա», «Տաշիր բարեգործական հիմ-

նադրամ» ընկերությունները, ինչպես նաև այդ ֆակուլտետի շրջանավարտ անհատ անձինք:

- Իրավագիտության, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ուսանողներին, միջազգային օլիմպիադաներին մասնակցելու նպատակով, ֆինանսական աջակցություն են ցուցաբերել «Տավիտիան» հիմնադրամը, «Զանգեզուրի ՊՄԿ», «Կարմիր խաչի միջազգային կոմիտե», «Հայկական ծրագրեր» ընկերությունները:
- Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի կողմից իրականացվող միջազգային գիտաժողովի կազմակերպման համար ֆինանսական աջակցություն է ցուցաբերել «Հետազոտական մաթեմատիկա» հիմնադրամը:

Խնդրի *6-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր»:* Որպես բիզնես ծրագիր՝ 2017 թ-ից իրականացվում է ԵՊՀ ուսանողական հանրակացարանի հիմնովին վերանորոգումը, որից հետո կմշակվի վճարովի ծառայությունների ցանկը: Հանրակացարանի շահագործումը նախատեսվում է 2019 թ.:

*Խնդիր 8.2-ով* սահմանված է. *«Զարգացնել Համալսարանի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը»:*

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ՝ շուկայական և տնտեսական տարաբնույթ ռիսկերի նկատմամբ Համալսարանի ռեսուրսների կայունության ա-*

*ապահովման նպատակով*»: Ռիսկերի կառավարման նպատակով համալսարանի դրամական միջոցները ներգրավվում են առևտրային բանկերի կողմից առաջարկվող ավանդային ծրագրերում՝ հաշվի առնելով բնականոն առօրյա գործունեության չխաթարումը:

ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվներում շարունակաբար նախատեսվում է «Պահուստային կապիտալ» հոդվածը, ինչը ենթադրում է, որ այդ միջոցների հաշվին ծախսեր չեն նախատեսվելու, իսկ տարիների ընթացքում կուտակված դրամագլուխը կարող է օգտագործվել բացառապես շուկայական և տնտեսական տարաբնույթ տատանումների արդյունքում ռիսկերի կառավարման նպատակով:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ձարգացնել ֆինանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով*»: Ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման, ծրագրային ապահովման նպատակով ներդրվել են.

- «Հայկական ծրագրեր, 7-րդ տարբերակ» հաշվապահական ծրագիրը,
- «Հայկական ծրագրեր-Ձեռնարկություն» ծրագիրը, որը համատեղ շահագործվում է Հաշվապահության և Անձնակազմի կառավարման բաժնի կողմից:

Ներդրման փուլում է գտնվում «Ուսանող» հաշվառման ծրագիրը, որը շահագործվելու է Հաշվապահության, Ուսումնամեթոդական վարչության և ֆակուլտետների կողմից:

Խնդիր 8.2-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը»: Համալսարանի ֆինանսական գործառույթներ իրականացնող Հաշվապահության, Անձնակազմի կառավարման բաժնի և Գնումների պլանավորման և պահեստավորման վարչության աշխատողների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ: Կազմվել և գործողության մեջ են դրվել հաշվապահական ծառայության գործառույթների իրականացման ընթացակարգեր:

«Կադրերի բաժին» և «Իրավաբանական բաժին» ստորաբաժանումները վերակազմավորվել են որպես «Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչություն», արդյունքում օպտիմալացվել են հաստիքները, և տնտեսվել են ֆինանսական միջոցներ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր»: Ռեսուրսախնայողության համար իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- Մասնաշենքերում լուսատուները փոխարինվել են «LED» լուսատուներով,
- Մարզահամալիրի տանիքում տեղադրվել է «Արևային ՖՎ» համակարգը:

Ներդրման փուլում է գտնվում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգը:

***Խնդիր 8.3-ով նախատեսված է. «Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը»:***

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Օպտիմալացնել Համալսարանի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը»:* Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համալսարանում աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխությունը, ինչի արդյունքում աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով իրականացվել է կառուցվածքային որոշ ստորաբաժանումների օպտիմալացում:

Ընթացքի մեջ են համալսարանի ներքին իրավական ակտերի լրամշակման աշխատանքները, որում կարևորվում է համալսարանական ստորաբաժանումների հաշվետվողականության բարձրացումը:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Համալսարանի կառավարման համակարգում ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ»:* Այս ուղղությամբ գործընթացներն սկսվել են ավելի ուշ, քան նախատեսված էր ԵՊՀ ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանով, ուստի դրանք դեռևս իրականացման փուլում են: Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել են փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի ներդրման աշխատանքները: Նախատեսվում է մինչև տարեվերջ իրականացնել աշխատողների ուսուցում և համակարգի փորձնական կիրառում:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ներդնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի համակարգ»:* Ձեռ-

նարկվել և ընթացքի մեջ են ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը չափող ցուցանիշների և աուդիտի իրականացման ընթացակարգերի մշակման ուղղությամբ աշխատանքները:

Խնդրի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ձարգացնել Համալսարանի տեղեկատվական համակարգերը»*: Այս ուղղությամբ իրականացվել են ներդրված «Ինտրանետ» համակարգի բարելավման և գործառույթների արդյունավետության բարձրացման աշխատանքներ:

Նշված խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը համալսարանական կառավարման գործընթացներում»*:

Ուսանողական խորհրդի կողմից իրականացվող բազմաթիվ ծրագրերը («Ուսանողական հիմնախնդիրները ԵՊՀ-ում» սեմինար-դասընթացներ, («Ուսանողական ռեկտորատ», «ՈԻԽ զարգացման» դպրոց, «Ուսանողական ինքնակառավարում» համաժողով և այլն) միտված են բուհի գործունեության տարբեր հարցերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու ներհամալսարանական կյանքին ուսանողների մասնակցության խթանմանը: Համալսարանի կառավարման գործընթացներում սովորողների մասնակցությունն ապահովվել է գործող կարգի (ՀՀ օրենսդրություն, ԵՊՀ կանոնադրություն, ներքին իրավական ակտեր) համաձայն՝ տարբեր մակարդակի կառավարման մարմիններում սովորողների ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ: Ուսանողների առավել ակտիվ մասնակցություն է արձանագրվել համաբուհական մակարդակում, իսկ ֆակուլտետային մակարդակում ուսանողների ներգրավումը



երբեմն կրում է ֆորմալ բնույթ: Միաժամանակ, ուսանողներին հուզող խնդիրները պարբերական բնույթ ունեցող հանդիպումների ընթացքում ներկայացվել են ռեկտորին, պրոռեկտորներին և ռեկտորատի այլ ներկայացուցիչների:

***Խնդիր 8.4-ով սահմանված է. «Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»:***

Խնդրի իրագործմանն ուղղված *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը»:* Այս գործողության իրականացմանն ուղղված գործընթացները շարունակական են և մշտապես գտնվում են ԵՊՀ ղեկավարության ուշադրության կենտրոնում: Իրականացվող աշխատանքները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ գործող կարգերի շարունակական վերանայում (կատարելագործում), ուսանողների իրազեկում, կատարված աշխատանքների արդյունքների մշտադիտարկում: Այս համատեքստում հարկ է շեշտել հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունված ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը, ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը, ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անց-

կացման կարգը: Ներհամալսարանական կարգերը, հրամաններն ու այլ փաստաթղթեր օպերատիվ տեղադրվում են ԵՊՀ ինտերնետային պորտալի «Փաստաթղթեր» կայքում, դրանց մասին ուսանողները տեղեկանում են նաև կայքի և էլփոստի միջոցով: Ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին արդյունքները սահմանված կարգով հրապարակվում են, և ուսանողները տեղեկանում են իրենց և իրենց համակուրսեցիների առաջադիմության մասին: Ուսանողների և շրջանավարտների հարցման միջոցով մշտադիտարկվում են տվյալ և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ սովորողների արձագանքն ու գնահատականը (հաշվետու ժամանակահատվածում ընդունվել է նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների կազմակերպման կարգը՝ նոր խմբագրությամբ):

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը Համալսարանի կառավարման համակարգում»*: Այս ուղղությամբ նույնպես իրականացվում է շարունակական աշխատանք: ԵՊՀ ինտերնետային պորտալը և «Երևանի համալսարան» ամսաթերթը ապահովել են համալսարանական գործընթացների լայն լուսաբանում, աշխատողները տարբեր խնդիրների մասին պարբերաբար իրազեկվել են նաև կորպորատիվ էլեկտրոնային փոստի համակարգի միջոցով: ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը համապատասխան արհրյուրոնների միջոցով աշխատողներին տեղեկացրել է նրանց հուզող խնդիրների մասին: Համալսարանի կառավարման մարմիններ-

րի (ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդ, ԵՊՀ գիտական խորհուրդ, ստորաբաժանումների գիտական խորհուրդներ) որոշումներն ու արձանագրությունները և այլ փաստաթղթեր տեղադրվում են ԵՊՀ կայքում:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և գործածության մեջ դնել «Համալսարանի աշխատողների և ուսանողների էթիկայի կանոնակարգ»: Ուսումնասիրելով ԵԽ և ԵՄ աջակցությամբ իրականացված «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի համապատասխան արդյունքներն ու մեկնաբանությունները՝ ԵՊՀ-ում մշակվել է էթիկայի կանոնակարգի նախագիծ: Սակայն հաշվի առնելով կանոնակարգի ընդունման և կիրառության մեջ դնելու օրենսդրական հիմքերի ու իրավակարգավորումների անհրաժեշտությունը՝ էթիկայի կանոնակարգի ընդունումը հետաձգվել է մինչև «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը:

Վերոնշյալ խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Քննարկել հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարողականը ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում և գիտական խորհրդում»: Այս ուղղությամբ իրականացվում է ամենամյա գործընթաց (ծրագրի կատարողականը քննարկվել է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում և գիտական խորհրդում): 2018 թվականին ավարտվում է «ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի» իրականացման ժամկետը: 2019 թ. առաջին կիսամյակում նախատեսվում է քննարկել և ընդունել 2019-2020 թթ. համապատասխան միջոցառումների ծրագիր:

Խնդիր 8.4-ի 6-րդ գործողությամբ նախատեսված է. «Կազմակերպել հակակոռուպցիոն տեխնոլոգիաների և դրանց կիրառման հմտությունների վերաբերյալ ուսումնական մոդուլներ»: ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում բակալավրիատի կրթական ծրագրում ներառված է «Իրավունքի հիմունքներ» պարտադիր դասընթացը: Դասընթացի նպատակն է սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների իրավական-օրենսդրական կարգավորման հիմունքները, մշակել ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ: Դասընթացի հիմնական բաժիններից մեկը վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերին: Իրավագիտության ֆակուլտետում իրականացվող «Իրավունքի տեսություն, սահմանադրական իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրում ներառված է «Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները» կամընտրական դասընթացը:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի («Պետական ծառայության էթիկա», «Արտասահմանյան երկրների հակակոռուպցիոն քաղաքականության համեմատական վերլուծություն», «Հանրային կառավարման համակարգի ամբողջականություն (Public Integrity)»), ինչպես նաև Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մի շարք դասընթացներ («Հակակոռուպցիոն քաղաքականություն», «Հանրային ծառայություն և պետական կադրային քաղաքականություն») նախատեսված են դիտարկելու նաև կոռուպցիային վերաբերող խնդիրներ, ներկայացնելու հակակոռուպցիոն գործընթացների կազմակերպման և իրականացման մեխանիզմներ:

## IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:*

**«Միջազգայնացում և գործակցություն»** ռազմավարական նպատակի **9.1. խնդրով** սահմանված է. **«Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը»:**

Խնդրի **2-րդ գործողությամբ** նախատեսված է. **«Մշակել միջազգայնացման գործընթացների գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմ, դրանց հիման վրա երկամյա պարբերականությամբ իրականացնել համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):** Այս գործողությանը համապատասխան՝ ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել է ներքին բենչմարքինգ՝ շարժունությունը գնահատելու համար: Էականորեն աճել է փոխանակման ծրագրերի շրջանակում արտասահման սովորելու մեկնած ուսանողների թիվը:

**3-րդ գործողությամբ** նախատեսված է. **«Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները»:** Այս գործողությամբ նախատեսված միջազգայնացման գործընթացների պատասխանատուների ինստիտուտը գործում է բոլոր ֆակուլտետներում:

Խնդրի **4-րդ գործողությամբ** նախատեսված է. **«Ստեղծել միջազգայնացման աջակցության համացանցային պորտալ և վիրտուալ պլատֆորմ»:** ԵՊՀ կայքում միջազգայնացման գործընթացները լուսա-

բանող բաժինն ավելի տեսանելի և հեշտհասանելի է դարձել: Այստեղ պարբերաբար թարմացվում է միջազգայնացմանն առնչվող տարբեր ուղղությունների, հետազոտությունների, միջազգային փոխանակումների, այդ թվում՝ Էրազմուս+ ծրագրի և միջբուհական համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Իրականացնել միջազգայնացմանն ուղղորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում»*: Այս ուղղությամբ հաշվետու ժամանակաշրջանում Միջազգային համագործակցության վարչությունը կազմակերպել է դասընթացներ՝ նվիրված համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությանը: Դասընթացների թեմաներն էին՝

1. Միջազգայնացում. ներածություն, բրենդինգ, բենչմարքինգ, դասակարգում
2. Ուսումնական պլանների միջազգայնացում: Համատեղ և կրկնակի դիպլոմներ
3. Միջազգայնացում. որակի ապահովում և գնահատում
4. Գիտական հետազոտությունների միջազգայնացում:

Ընդհանուր առմամբ վերապատրաստվել են ԵՊՀ 63 աշխատող:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մտեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ»*: Արդեն իսկ գործում է հրավիրյալ պրոֆեսորների ինստիտուտը: Հաշվետու ուստարում ԵՊՀ են այցելել 4 հրավիրյալ պրոֆեսոր:

*Խնդիր 9.2-ով սահմանված է. «Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում»:*

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներդնել թիրախային օտարալեզու կրթական ծրագրեր և մոդուլներ»: Նախատեսված միջոցառումների համար ԵՊՀ կայքում հասանելի է ֆակուլտետներում կազմակերպվող օտարալեզու դասընթացների ցանկը:

Կազմակերպվել են ռուսերենով և անգլերենով դասընթացներ օտարերկրյա քաղաքացիների համար: Մշակվել է 29 օտարալեզու ծրագիր:

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում 2017/2018 ուստարվանից մեկնարկել է «Ֆարմացիա» օտարալեզու (անգլերեն) բակալավրի կրթական ծրագիրը ԵՊՀ-ում սովորող իրաքցի քուրդ 7 ուսանողի համար:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Զարգացնել և ընդլայնել ամառային կրթական, մշակութային և ճանաչողական ծրագրերը»: Այս ուղղությամբ շարունակվել է ամառային դպրոցների կազմակերպումը:

Նշված խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանը: Խթանել ներգնա և արտագնա շարժունությունը»: ԵՊՀ կայքում պարբերաբար տեղեկատվություն է տեղադրվում փոխանակման ծրագրերի վերաբերյալ, ինչը նպաստել է 2017/2018 ուստարում ԵՊՀ աշխատողների և սովորողների շարժունությանը:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ձարգացնել օտար-երկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ»:  
Այս առումով հաջողությամբ իրականացվել են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի շրջանակում (շարունակվել են ծրագրերը միջազգային հարաբերությունների, իրավագիտության, ռուս բանասիրության, ինֆորմատիկայի, տնտեսագիտության, կառավարման, զբոսաշրջության բնագավառներում, ֆարմացիայի ոլորտում):

Մեկնարկել է կրկնակի դիպլոմով ծրագիր (կենսաբանության բնագավառում) Բելգորոդի համալսարանի հետ: